

ՅԱՋԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՑԵՌԻԷՆ-ԽՄԻԱԳԻՐ

ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿԵՂԵՍԻՐԵԱՆ

کتبخانه

SUNIK

F. SUNIK

ԻՍ 1910

Թ Ի Ի 11

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆԻԻԹՆ ՈՒ ՀՈՒԻՆ. — Պայտաճիկ կրօնական եւ գիտ-

քեան մեջեղ

Հայոց Հասիկը

Մայր Արոն

Եկեղեցիէն պէտք է բարեփոխել թէ Եկեղեցականութիւնը

ՕՏԱՐ ԷՋԵՐ. — Ներքող փոխադրութեան

Գիւղական եկեղեցի

ՄՈՌՑՈՒԱՆ ԷՋԵՐ. — Օրագրութիւնը

Ազգիկն ձայնը

Պատմութիւն Հայ Զայնագրութեան

Խղճմանութեան բաժին (Բերքուած)

Ազգային կեանքը

Ազգային բարեգործական ընդհ. միութիւն

ԶԱՐՄԱՅՐ ՔԱՅԱՆԱՅ

ԳԵՌԳ Մ. Վ. ԱՍԼԱՆԵԱՆ

ԱՐԵԱԿ Ա. ԱԼՊՅԱՃԵԱՆ

ՍՈՒՐԷՆ Վ. ԳԱԼԵՄԵԱՆ

ՎԻՔՅՈՐ ՔՈՒՋԷՆ

ԶԻՅՅԷ-ՍԱՐԱՅ

Գ. ՕՏԵԱՆ

ԳՐ. Ն. ԳԱԼՈՒՍԵԱՆ

ԱՐԻՍՏԱԿԷԱ ՔԶ. ՆԻՍԱՐԷԱՆ

ԱՐՏԱԻԱԶԴ ՎԱՐԴԱՊԵՏ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ/ն 30 փարայ

ՅԳՐԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐԶՈՒՄԵՆ

Զաւթաֆնըր Ծակոբեան իւան, Կ. Պոլիս

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՄ . — Առաջն . Փոխանորդ
Տ . Արսէն Բէ . Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՆ . — Տ . Ռուբէն Բէ . Գա-
րիկեան
ԱՄԵՐԻԿԱ . — Առաջն . Փոխանորդ Տ . Պո-
լոս Վրդպ . Գաթիճեան
ԱՅՆԹԱՊ . — Տ . Գարեգին Բէնյ . Պողարեան
ԱՐՄԱՇ . — Փոխ-Վանահայր Տ . Մարոս Մ .
Վրդպ . Նարոյեան
ԲԱՅԵՐԴ . — Մ . Սանտեան էֆ .
ԳԱՂԱՏԻԱ . — Առաջնորդ Տ . Բարգէն Մ .
Վրդպ . Կիւլէսեան
ԳՕՆԻԱ . — Տ . Յովհ . Բէնյ . Դույումեան
ԳԱՀԻՐԷ . — Առաջնորդ Տ . Մկրտիչ Մ .
Վրդպ . Աղաւաղեան
ԵԴԵՍԻԱ . — Բ . Թիւրաքեան էֆ .
ԵՍՁՂԱՏ . — Առաջնորդ Տ . Խորէն Մ . Վ .
Դիմաքեան
ԵՐԶՆԿԱ . — Առաջնորդ Տ . Երուանդ Վ .
Փէրտանճեան
ԵԻԴՈԿԻԱ . — Առաջն . Տեղապար Տ . Ար-
աւազգ Վրդպ . Գալէստեան
ԶՄԻՒՆԻՒԱ . — Տ . Յարութիւն Բէ . Տ .
Սարգստեան
ԷՍԿԻՇԷՆԻՐ . — Տ . Դալուստ Բէնյ . Տ . Գա-
լուստեան
ԽԱՐԲԵՐԴ . — Առաջն . Տեղապար Տ . Գէ-
որգ Մ . Վրդպ . Աղսնեան
ԿԱՐԻՆ . — Առաջնորդ Տ . Սմբատ Մ . Վ .
Սաստիճեան
ԿԻՐԱՍՈՆ . — Մաթոս էֆ . Թաքատեան
ԿԻԻՄԻԻԼՃԻՆԷ . — Տ . Ներսէս Բէ . Նշանեան
ՀԱԼԷՊ . — Առաջն . Տեղապար Տ . Շահէ Վ .
Գասպարեան
ՄԱՆԶԷՍԹԷՐ . — Առաջնորդ Տ . Գէորգ Ս .
Եպիսկ . Իւթիւճեան
ՄԱՐԱՇ . — Տ . Հմայեակ Բէնյ . Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ . — Յակոբ էֆ . Սրապեան
ՄԱՐՍԻԼԻԱ . — Հոգեւոր Տեսուչ Տ . Եղիշէ
Բէնյ . Գալչինեան
ՄՈՍԿՈՒԱ . — Տ . Պօպօնեան Բէնյ .
ՆԻԿՈՄԻԴԻԱ . — Տ . Ոսկի Բէնյ . Պիպիեան
ՆԻԻ-ԵՕՐԲ . — Տօքթ . Թիւրաքեան Խան
ՆՈՐ ԶՈՒՂԱ . — Առաջն . Փոխանորդ Տ .
Բագարատ Վրդ . Վարդապարեան

Շ . ԳԱՐԱՀԻՍԱՐ . — Տ . Նաթան Բէ . Տատ-
եան
ՈՒՇԱԲ . — Կարապետ էֆ . Բենեանեան
ՊԱՆՏՐՄԱ-ՊԱԼԷԲԷՍԷՐ . — Առաջնորդ Տ .
Կարապետ Մ . Վրդ . Մազլումեան
ՊԱՂՏԱՏ . — Առաջնորդ Տ . Մովսէս Ս .
Եպիսկ . Կէօմբիւքեան
ՊԱՅՐԱ . — Կարապետ էֆ . Բէրթմէնեան ,
տնօրէն ազգ . Վարժարանազ
ՊԱՐՏԻԶԱԿ . — Յովհաննէս էֆ . Տ . Կարա-
պետեան
ՊԵՅՐՈՒԹ . — Հոգեւոր Տեսուչ Տ . Եղի-
կիւլ Վրդպ .
ՊՈՒՔՐԷՇ . — Ղազարոս էֆ . Կանիկեան
ՊՐՈՒՍԱ . — Առաջնորդ Տ . Յովհաննէս Ս .
Եպիսկ . Արշարունի
ՌՈՒՍՃՈՒԲ . — Տ . Մկրտիչ Բէնյ . Մըրժ-
նիկեան
ՌՕՏՈՍԹՕ . — Առաջն . Փոխանորդ Տ . Բար-
թող Բէնյ . Թաքմեան
ՍԱՄՍՈՆ . — Առաջն . Տ . Սահակ Մ . Վրդ .
Օտապաշեան
ՍԵՐԱՍՏԻԱ . — Առաջն . Փոխանորդ Տ .
Թէոփիլէ Բէ . Օտապաշեան
ՍԵՂԱՆԻԿ . — Հոգեւոր Տեսուչ Տ . Սերովբէ
Բէ . Ներշապուհ
ՍՕՖԻԱ . — Տ . Մարոս Բէնյ . Տ . Մարոս-
եան
ՏԱՐՏԱՆԷԼ . — Տ . Դիմիսիոս Բէնյ . Տրէգ-
եան
ՏԷՏԷ ԱՂԱՃ . — Գարեգին Բէնյ . Տէօլ-
լէճեան
ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏ . — Դաւիթ էֆ . Մովսէսեան
ՏԻՄԷԹՕԴԱ . — Տ . Գէորգ Բէ . Թէրզեան
ՏՓՂԻՍ . — Հ . Առաքելեան
ՓԱՐԻԶ . — Հոգեւոր Տեսուչ Տ . Վառդա-
պուհ Բէնյ . Բիպարեան
ՔԷՍՍԹԷՆՃԷ . — Տ . Մատթէոս Բէնյ . Մա-
նիկեան
ՔՂԻ . — Առաջն . Տեղապար Տ . Պսակ Վրդ .
ՖԻԼԻՊԷ . — Տ . Տաճատ Բէնյ . Դերձակեան
ՖՐԷԶՆՕ . — Ազն . Յակոբ էֆ . Նշկեան

«ՏԱՃԱՐ»-ը կը վաճառուի բոլոր քա-
ղաքաւաճառներու կողմէ : Վաճառման կեղ-
րանատեղին է Պոլիս , Պազրըրըր՝ Արմե-
նակ Եազըճեան և Ընկ . «Սիւնեաց» Գրա-
տուն . Բերա , Սըլանտիսի դէմ , ծխալա-
ճառ Գաւնիկ էֆ . Կիւլէրեանի և ուրիշ
ծխալաճառներու քով :



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

15 ՄԱՅԻՍ 1910

ԹԻԻ 11

ՆԻԻԹՆ ՈՒ ՀՈԳԻՆ

ՊԱՅՔԱՐԸ

ԿՐՕՆՔԻՆ ՈՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋՏԵՂ

Տառապանքի երկարատեւ, դաւաճող շրջանէ մը ետքը, հայ ազգն ու եկեղեցին յուսալից ապագայի մը սեմին վրայ կը գտնուին, շնորհիւ Օսմ. Սահմանադրութեան որ ազատութիւնն ու վերածնունդը բերաւ թուրքիոյ գեղեցիկ երկրին, և անոր բազմազգի բնակչութեան զանազան տարրերուն և ցեղերուն, որոնց իւրաքանչիւրը, իր առանձնատուկ ընդունակութիւններուն շնորհիւ, դիւրութիւն և միջոց ունի լայնօրէն զարգանալու առանձնապէս, և ատով իսկ հզօր օժանդակ մ'ըլլալու երկրին ընդհանուր զարգացման:

Բայց որպէս զի իւրաքանչիւր ցեղ կարենայ ի գլուխ հանել այդ զարգացման մէջ իրեն ինկած բաժինը, պէտք է ճշտած ըլլայ իր ուղեգիծը, յետ հասուն խորհրդածութեան. հակառակ պարագային յետաձուց մը կ'ըլլայ ընդհանուր յառաջդիմութեան

հոսանքին մէջ, և կը տուժէ նիւթապէս թէ բարոյապէս:

Խնդիր է թէ մենք, Հայերս, որոշակի կըցած ենք ճշտել ճամբան ուրկէ պէտք է քալենք, թէ տակաւին խարխափանքի անստոյգ շրջանի մը մէջ կը գտնուինք, ապագայի նոյնքան անստոյգ և տխուր հեռանկարով:

Պատասխանը հարցումին մէջ է: Դիտող, հետազօտող աչքով մը նետուած նայուածք մը մեր հանրային գործերուն վրայ, բաւական պիտի ըլլայ տրտում՝ եզրակացութիւններու յանգելու՝ Հայու ապագային նկատմամբ:

Մէկդի թողլով ազգային կեանքի մէջ տիրող վարանոտ կացութիւնը, որ դուրս է այս գրութեան համար գծուած շրջանակէն, անկասկած կարելի է հաստատել թէ վարանում, անստուգութիւն կը տիրէ միտքերու մէջ՝ մեր հոգեւոր, բարոյական կեանքին վերաբերեալ հարցերուն ալ վրայ, արդիւնք գլխաւորաբար այն մահատիպ անտարբերութեան, որուն վրայ խօսելու առիթ ունեցած ենք Տաճարի

2. Թիւին մէջ, մասնաւոր յօդուածով մը:

Իայց անտարբերութիւնը մահ է, քայքայում է, նիւթական թէ բարոյական աշխարհին մէջ. անիկա կործանումն է մեր ազգային, ընկերական և հոգեկան կեանքին հաւասարապէս. անիկա ամայացումն է մեր տաճարներուն, աւերումը մեր վարժարաններուն: Եւ ինչ որ աւելի՛ եւս կը սաստկացնէ չարիքը, սա տրտում պարագան է որ ժողովրդային ընդհանուր անտարբերութեան հանդէպ, կը դառնա զաւարդ մը մարդոց որ ինքզինքնին ամենազէտներ կարծելով՝ կը խօսին, կը ճռուեն այնպիսի հարցերու վրայ, որոնք համալսարանական լայն հմտութիւն, շրջահայեաց լրջախոհ միտք, և խորունկ ճանաչողութիւնը կը պահանջեն այն ժողովուրդին որուն մէջ կը գործեն. յատկութիւններ որոնցմէ դժբախտաբար զուրկ է այդ առաջնորդողներու ամենատուար մեծամասնութիւնը:

Այսպէս, տնինք ընկերաբաններ որոնք ընկերվարական ամէնէն յառաճաշայեալ գաղափարները ծաւալել կ'աշխատին խօսքով ու գրչով, առանց սերտած ըլլալու լրջօրէն հայ ժողովուրդին ընկերային ցաւերը, առանց անդրադառնալու թէ այդ նոր վարդապետութիւնները կրնան դարման մը ըլլալ այդ ցաւերուն, առանց նոյն խոհ իրենք թափանցած ըլլալու ոգիին այդ վարդապետութեանց զորս կը քարոզեն՝ լաւագոյն դատի մը արժանի եռանդով: Ունինք քսաներորդ դարասկիզբի առաքեալներ, որոնք կ'ուզեն Հայ Եկեղեցիին նման դարաւոր Հաստատութեան մը հզօր դերը չեզոքացնել, և եթէ հնար է

քանդել նոյն Հաստատութիւնը, անգիտակից համոզումով մը թէ Եկեղեցին փաստած է Հայու ինքնուրոյն գոյութեան. և ստոնք այս ընթացքին կը հետեւին, առանց ճանչցած ըլլալու կարծեցեալ թշնամին որուն դէմ պայքար կը բանան, ինչպէս արդէն մենք Հայերս՝ դիւցազնութիւնը ունինք հերոսական կռիւներ մղելու այնպիսի ուժերու դէմ որոնք մեզմէ անհամեմատ աւելի հզօր են, և որոնց դէմ ելնելը փշուրիլ կը նշանակէ պարզապէս՝ ողջմտութեան, շրջահայացութեան նշույն խոհ ունեցող մարի մը համար: Ունինք, վերջապէս, հոյ մը երիտասարդներ, որ կրօնքին դէմ կը խօսին յանդուգն լեզուով մը, Աստուծոյ գոյութիւնը կ'ուրանան՝ յանուն գիտութեան, հակառակ որ ո՛չ պէտք եղածին չափ ուսումնասիրած են կրօնքն և Աստուծոյ գոյութեան ամենախորունկ հարցը, և ոչ գիտութեան բաւականաչափ պաշար ունին, հեղինակօրէն կարծիք յայտնելու համար դարերու իմաստասէրներուն և աշխարհահռչակ գիտնականներուն անգամ մեծ երկիւղածութեամբ շօշափած այդ խնդիրներուն վրայ:

Իւ շատ մը միամիտ, անկեղծ հոգիներ, չլացած չողողուն բառերէ, ճռում՝ նախագասութիւններէ, ականջ կը դնեն ամէնէն անմարսելի իմաստակութիւններու, և մակերեւութային տեսութեան մը առթած խաբկանքին անձնատուր, հետեւողներ կ'ըլլան այն տեսակ վարդապետութեանց, որոնցմէ չեն կրնար օգտուիլ ո՛չ իրենք և ոչ ազգին ընդհանրութիւնը, և որոնք ընդհակառակն ամէնէն ցտալի վատասերումին առիթ պիտի կրնան ըլլալ:

Այս երևույթը նոր չէ. երիտա-
սարդութիւնը խիզախ, յանդուգն
կ'ըլլայ ընտելութեամբ: Վարժարան-
ներու մէջ կրօնքի ճշմարիտ ոգիին
վրայ շատ հարկւանցի ծանօթութիւն-
ներ միայն տրուելը պատճառ եղած է
որ նոր սերունդը, սխալ իմացուած ա-
զատամտութեամբ մը, անտարբեր և
յաճախ հակակիր լեզուով մը խօսի
հաւատքի վերաբերեալ խնդիրներու
վրայ: Բայց մէկ երկու տարիէ ի վեր
աւելի եւս չէշտուած է սոյն երևույ-
թը, և նորոյթի կարգ անցած է հի-
մա հակակրօնական գաղափարներ
քարոզել, ինչ որ վերը ակնարկուած
միամիաներու կողմէ իբրեւ գիտնա-
կանութեան ապացոյց նկատուիլ սո-
վորութիւն եղած է:

Այդ սխալ համոզումին՝ խոր ար-
մատ ձգելէն առաջ՝ բովանդակ ան-
հեթեթութիւնը ի վեր հանել, ժողո-
վուրդին մէջ ճշմարիտ կրօնքի ոգին
ծաւալել խղճի պարտք մ'է ամէն ա-
նոնց որ ժողովրդին բարոյական կեան-
քին առաջնորդն ըլլալու նուիրական
պաշտօնն են ստանձնած: Կարողա-
գոյն գրիչներու առջեւ, առանց դա-
ւանական խտրութեան, լայնօրէն բաց
են ՏԱՃԱՐԻ էջերը: Սպասելով ա-
տոնց, մենք կը ձեռնարկենք յօդուած-
ներու շարքի մը, որոնց ձգտումը պի-
տի ըլլայ Եւրոպական հեղինակաւոր
միտքերու — կղերական թէ աշխար-
հական — հետեւողութեամբ ցուցնել
թէ ո՛րքան կը սխալին անոնք որ յա-
նուն գիտութեան կրօնքը կ'արհամար-
հեն, յանուն անշունչ նիւթին հոգին
կ'անտեսեն, այս կերպով չորցնելով
մարդկային սրտին մէջէն աղբիւրը
բոլոր ազնիւ զգացումներու, վեհանձն
ձգտումներու, գաղափարական վսեմ
անձնուիրութիւններու:

Ինչ է գիտութիւնը, զոր սո-
վորութիւն եղած է ցոյցնել իբրեւ
ամենամեծ ախոյեանը կրօնքին, բնա-
զանցական վարդապետութեանց դէմ:

«Գիտութիւնը, կ'ըսէ ֆրանսայի
հեղինակաւոր միտք մը, բժշկական ա-
կադեմիոյ թղթակից-անդամ Տքթ. Շ.
Փիսէնիօն, երբեք զործ չունի բնա-
զանցութեան հետ: Անիկա կը զբաղի
ոչ թէ իրերու բնութեամբը, այլ ա-
նոնց իրարու հետ ունեցած յարաբե-
րութիւններովը: Գիտութիւնը բան մը
չի սորվեցներ մեղի նիւթական աշ-
խարհի ծագումին վրայ, այլ բներե-
ւոյթներն իրարու միացնող յարաբե-
րութեանց բանալին կուտայ մեղի մի-
այն, և ամէնն այս է...: Ինչ է
մարդը, ո՞րն է իր տեղը բնութեան
մէջ, ո՞ւրկէ կուգայ, ո՞ւր կ'երթայ:
Անխուսափելի հարցումներ են ասոնք,
որոնք բնազանցութեան սահմանին մէջ
կը մտնեն: Իրաւ է որ մարդ կրնայ
այս հարցումները չընել, բայց խնդիր
մը չնշելը զայն լուծել չէ: Անասուն-
ներն անտարբեր են բոլորովին այս
հարցումներուն: Թութակ մը ունիմ,
որ բնաւ հոգը չընէր գիտնալու իր
ծագումին գաղտնիքը:»

Յիշուած հեղինակը, և ուրիշ շատ
հեղինակներ, համամիտ են սա գա-
ղափարին վրայ թէ գիտութիւնն և
բնազանցութիւնը, եթէ իրարու հետ
չեն խառնուիր և յարաբերութիւն
չունին, բնաւ երբեք իրարու հակա-
ռակ չեն՝ իրենց ընդգրկած առար-
կայով: Մէկը կը սկսի ճիշտ այնտեղ
ուր միւսը կը վերջանայ: «Մարդիկ
պէտք եղածին չափ չեն անդրադառ-
նար այն տարբերութեան վրայ որ կը
գտնուի ֆիզիքական աշխարհը վարող
օրէնքներուն և բայոյական աշխարհի
օրէնքներուն միջեւ: Ֆիզիքական աշ-
խարհին օրէնքներն հաստատուած են

առարկաներու վրայ կատարուած քննութեանց արդիւնքով. իրողութիւններ, կամ իրողութեանց համախմբումներ կան, որոնք տարակոյսի տեղի չեն թողուր բնաւ: Ընդհակառակն, բարոյական աշխարհին մէջ խնդիրը կը տարբերի բոլորովին: Այնտեղ ճշմարտութիւնները չեն հաստատուիր առարկաներու իրական գոյութեամբ, այլ այն արդիւնքներով միայն որ յառաջ կուգան իրենց գործնական կիրառումով: Բարոյական վարդապետութիւն մը չիյնար վերաբոյժին նշգրտկին տակ. ամէնէն հզօր մանրագէտները բան մը չեն սորվեցներ մեզի անոնց մասին: . . . Մեր ժամանակի մեծագոյն դժբաղդութիւնն եղած է բարոյական աշխարհին մէջ փոխադրելու ջանալ ֆիզիքական աշխարհին համար գործադրուած մեթոտները: Ատոնք երկու անշատ շրջանակներ են որ իրարու բոլորովին աննման ապացուցման եղանակներու կը կարօտին: Ձանոնք իրար խառնել ուզելն յառաջ բերած է այն դժնդակ կացութիւնն որ կը ճնշէ ժամանակակից ընկերութիւնը»:

Նոյն հեղինակն ուրիշ տեղ մը իրաւամբ դիտել կուտայ թէ գիտութիւնն այսօր այնպիսի հսկայ յեղաշրջումներու ենթարկուած է, որ ամէնէն աւելի զօրեղապէս հաստատուած ծանօթութիւնները կը ցնցուին իրենց հիմերէն: Կիւսդավ Լըպօն, նիւթին կազմութեան վրայ իր կատարած հետազոտութիւններուն հետեւանօք, հիմնապէս փոփոխած է ցարդ ընդունուած գաղափարները. այնպէս որ եթէ իր տեսութիւններն հաստատուին, նոյնինքն գիտութիւնն ալ բնագիտական հիմ մը ունեցած պիտի ըլլայ: Եւ յերաւի, ըստ նոյն

հեղինակին տեսութեանց, հիւլէները՝ նիւթական աշխարհի կազմութեան նախատարրերը, յառաջ կուգան խրտայեալ տեսակ մը ուժէ, որ անհուն անջրպետին մէջ սփռուած, կը ծառայէ նիւթերու կազմութեան, որոնք կը շրջափոխուին ու կը փոթորկին աշխարհներու մէջ:

Ահա՛, ուրեմն, ըստ դիտական ամենանոր վարդապետութեանց, նոյնինքն գիտութիւնն ալ կը ճանչնայ նիւթէն վեր անծանօթ ուժի մը գոյութիւնը, որ կը կազմէ և կ'եղանակաւորէ աշխարհները:

Ո՞րն է այդ խտացեալ ուժը որ, տիեզերքին մէջ սփռուած, աշխարհներ կը կազմէ. ո՞րն է այդ անծանօթ զօրութիւնը, զոր ամէնէն նիւթապաշտ գիտնականներն անգամ կը հարկադրուին ճանչնալ ու խոստովանիլ՝ իբրեւ ազբիւրը նիւթական աշխարհին: Գիտե՞նք անոր բնութիւնը, ծագումը, գործելու եղանակը: Բնագիտութիւն չէ՞ այդ պարզապէս ինչո՞ւ ուրեմն որոշ անուն մը չտալ այդ «խտացեալ, անծանօթ ուժին, չանուանել զայն տիեզերքն ստեղծագործող մեծ իմացականութիւնը, գերագոյն էակը, ամենազօր, ամենուրեք, ամենակարող, անսկիզբն և անվախճան, որ կը յայտնուի ամէն տեղ, տիեզերքի անհունութեան մէջ, մարդուն հոգիին և իմացականութեան մէջ, բնութեան հոյակապ տեսարաններու մեծ վայելչութեանը մէջ, ծառին մէջ, ծաղիկին մէջ, ամենաշնչին ճճիին և աննշան տերեւին մէջ, անհունօրէն փոքրին և անհունօրէն մեծին մէջ հաւասարապէս: Ինչո՞ւ չանուանել զայն միակ բառով մը. — Աստուած:

ԶԱՐԿԱՅՐ ՔԱՅՆԱՅՑ

ՀԱՅՈՑ ԶԱՏԻԿԸ

«Քրիստոս յարեալ ի մեռելոց, եւ յարուժեալքն իւրով մեզ գլխանս պարգեւեաց:»

Ահա ազատութեան տարիներուն երկրորդին է որ Զատիկը տօնեց հայ ժողովուրդը. իրաւամբ պանծալի տօն, բիւր յիշատակաց եւ հազար սիրանայ արժանի. աւանդ որ առաջին տարիի Զատիկը զբժարատար կրկին կարմիրով ներկուեցաւ, աղուոր ու փառաւոր Զատիկան սպիտակ նշանակները, որպէս Կիլիկեան հողը յոյս ու կոյս, հեղեղ արցունքով, գետ ու ծով արիւնով: Երանի՛ թէ արուեստական կարմիրով լինէր որպէս ի հուսց անտի սովորութիւն է, ու չթափէր քսան հազարներու պատուական արիւնը, որ պիտի մնայ անջինջ ու որչա՛փ անխիղճ...:

Քանի՛ աչքեր, որքան սրտեր ու որչա՛փ ալ հոգիներ, եւ քանի՛ տարիներով, այնքան դարերով զէպ ի վեր, հորիզոններէն շատ անդին, ծիրերէն ու ծաւալներէն շատ վեր նայեցան սնդագործում ու անհասնում, սպասելով մի հրեղէն էակի, մի հրաշակերտ մագաղաթեայ պատգամագրի. որ դար ու լեցնէր այն պակասը որ աշխարհի մէջ բուրովին խոր ու նոր բաց ու լաց, ամայի ու անապատի ընդարձակութիւն մը ահօսեր էր. կը սպասէին հրաշալի, սքանչելի, հզօր ու իշխան Մանկան մը, երկնալի Խորհուրդներով, թաքնուի գաղանիքներովը իմաստնոցած ու միշտ աստուածացած, որը պիտի հրաշագործէր մարդիկներու փրկութիւնը. պիտի յայտնէր աշխարհի ազատութեան սքանչելիութիւնը, հզօրապէս պիտի յաղթէր բոլոր բռնակալ իշխանութիւններուն, եւ պիտի տիրէր ամէն հոգիներու. այս՝ կը սպասէին զուարթունքու, որոնք նախապէս գային հաշակէին նոյն այն հզօրը, հանդիւրձեալը, Անոր աստ ուածային պաշտօնին ամբողջութիւնը, կեանքերու յոյսն ու լոյսը: Այո՛ հոգեկիւնդ ու որտապինդ կը սպասէին իրականացած տեանել այն տողերը որ ողջ Տիեզերք մը կը բովանդակէր իր մէջ. «Սա է որում ա-

կընկալցուք»: Բայց ամէն սիրտ ալ կը սպասէր նոյն այն իշխանին, սքանչելիին ու այդ հրաշալիին. ո՛չ, եւ կամ շատ շատ տարբերութիւններով. շատեր կը սպասէին Անոր՝ որ դար յագուրդ տար իրենց աշխարհային փառալի ու յոխորտալի ամէն յղիացումին ու ցոփացումին, տար ամէն այն դիւրութիւնն եւ հեշտութիւնը որ կարենային սանձարձակ ու հերարձակ ինչ որ անողնիւ, աննկարագիր, կեղծարար, չննական ու դիւական, բռնակալ ու ինքնակալ, կապտող ու կոլոպտող Ենն ու Իրը յառաջ վարել, երեւոյթներու փրկութիւնովը, ջերմեանքի ու սուտ բարեպաշտի խախտում հիմարովը. ու կը սպասէին որ դար իբրեւ աշխարհի ինքնակալ ու երկրակալ, թագ ու գահ ժառանգէր՝ կայսրութիւն ու իշխանութիւններ ջնջելով, պալատ ու դըլեակ նորոգէր՝ տիրող ու թագաւորող ժառանգութիւններ վերցնելով, անգամ մըն ալ երբայական Սաղիմը, Դաւթի Սիօնը, Սողոմոնի փայլը փառաւորէր, միայն աշխարհի տեսակէտէն, մարդիկներու հայեցակէտէն: Կը սպասէին քիչերը, որոնք յիրաւի ծարաւի էին ու նօթի այն կեանքին որ կը կարօտէր փրկադործութեան, երբ անառակը, մոլորածն ու ժանգոտածը երրիտկ ինքնաազանութիւնով անմահ կեանքին մօտը ծնուցած ու անուցած էին:

Ի՞նչ էր Յարութիւնը, եթէ ոչ փրկագործութեան վերերեւումը, սրտալի յայտնում. եւ ի՞նչ էր փրկագործութիւնը եթէ ոչ ճամարտութեան յառնումը, «Զի վկայեցից ճամարտութեան»:

Շատ դարեր առաջ ու վերջ մարդն ու մարդկութիւնը ջանաց, ու դեռ չէին ջանար, այս հարցին ճշգրտիւ պատասխանելու, եւ շատ անգամ պատի պատ, հերձումներձ, զիրար հակասող, մէկզմէկ չեզոքացնող պատասխաններով ու ճանրաններով եւ կրկին նոյն այն վիճակին մէջ. բայց եւ ոչ մին կրցաւ ու պիտի կրնայ մնալ նոյն այն դիրքին ու պատնէշին վրայ եւ ընդունելութեան արժանանալ, բայց ի յաւիտեական ճամարտութեան վկայէն, որ ինքն իսկ Յարութիւնով դա՛ իսկ սպացուցեց:

Գիտական հմուտ վարդապետութիւն-

ներ, խմատասիրական պերճ քարոզներ, կարողագոյն վարդապետողներու և ահագին աշխատողներու ձեռքով հրաշքներ ու սքանչելիքներ գործած են յերկրի, ու արհեստներու ու արուեստներու կատարելութիւնովը գիտական. և սակայն այսօր կը խոստովանին թէ որչափ ճշմարտութեան ճամբուն վրայ կը գտնուին, նոյնքան ալ հեռի են բուն աղբիւրէն ու ակնէն:

Չենք հիմնար, չենք ապշիր ու թովիր ու հմայիր բնութեան ու անոր հրաշագեղ գեղօրէիցը վրայ, ու հապա՛ որչափ անոր հարուստ ու ճոխ բուսական, կենդանական արտադրութիւններուն, որ մեզ կը հետաքրքրէ ու կը շահագրգռէ, և նոյնչափ կը յագեցնէ ու կը յւժեացնէ. բայց եթէ ուսումնասիրենք և խորը խուզարկենք, բաժան բաժան ընենք, հնարքտենք, կրկտենք ու պրպտենք, և վերջապէս միութեան, կազմաւորութեան ու բաղադրութեան կանոնները գտնենք, պիտի կրնանք գտնել թէ ինչ է զօրութիւնը որ միացուցեր է, ինչ է միութիւնը որ յառաջ բերեր է կապն ու ներդաշնակութիւնը ամբողջութեանը: Ու երբ այսպէս ճշմարտութեան զօրութեան ու իսկութեան առջեւ պիտի մնանք անզօր ու անգիտակ, և մեր մարդկային ուղեգով ու հայեցողութիւններով չպիտի կրնանք մինչեւ հոս հասնելու ու թափանցելու Աստուածային անհուն գաղտնիքներուն, ահա լուծուած հրաշալի ու տիեզերական գաղտնիքին առջեւ կենանք պատկառ, ուսանող, աշակերտող, ընդունող ու վայելող: «Բրիստոս յարեալ ի մեռելոց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց»: Ճշմարտութեան վերերեւումը չէր այլ ինչ, եթէ ոչ խզեալ կապը վերստին զօդել միացնել, արտաքին կեանքը ներքին կեանքին հետ համերաշխացնել, հաւասարել, մարդը որ ինչ կամ էր երկնային բարձրութենէն կրկին բարձրացնել առ Աստուած: Բիշերը կը սպասէին Մեսիային, Փրկչին որ իւր փրկագործութիւնն ի յայտ պիտի բերէր. գուցէ ըսողներ գտնուէին, ինչ որ ըսին, թէ Յիսուս մարդացաւ ու մարդկութիւնը հաւասարեցուց Աստուածութեան հետ սակայն,

ինչ չա՛ որ առաջ ու վերջ մարդը նոյնը մնաց: Ահա կտրուկ պատասխանը. «Ի Յարութեան յաւուրն յետնում», («այժմ տեսանեմք իբրեւ ընդ հայելի օրինակաց, այլ յայնժամ դէմ յանդիման»): Բայց սրագեղի յաւուրն յետնում արժանանանք ճիշտ ասորութիւն յանձին իւրաքանչիւր կեանքի, յարութեան արգեանցը, պէտք է որ յարութեան յիշատակին պատրաստութիւնը տեսնելու նոյն ցնծութիւնով ու բերկրութիւնով, նոյն հանգերձանքով ու տօնակոտ տարութիւնով, ինչոր իւզարեւր կանայք ու հուստացեալ աշակերտք. «Յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց»:

Թէ ինչ էր վիճակած մարդկացած Աստուծոյն յաշխարհի. կրկին մեղադրանք, վերստին հալածանք, անուր դատապարտանք, սոսկալի հայհոյանք. ու այս իսկ բաւականութիւն ու բուռարարութիւն չպիտի տար հակառակորդներին ու իրենց անսանձ կրքին, կատալի մոլուցքին ու արիւնոտ բռնցքին, որ կ'եռար ու կը վրժար դաժան ու խուժան սրանքներն մէջ սեւ ու դեւ, նոյնչափ մըն ալ մրոտած ու մքլոտած տարատրոսման հագիններուն մէջ: Այնչափ կուրցած ու կճեփած էր աչերնին, և լճացած ու մանոտած մտքերնին, որ իրենց ունեցած ու մոլիւցած հրէշ բարքերնին, վրէժ վարքերնին Անոր կը վերագրէին, Անոր՝ որ անմեղութեան, անբռնութեան անօրինակ ու վեհօրինակ սիպարն էր, այնչափ հեղիկ ու հանդարտիկ, որչափ քաղցրիկ ու մեղմիկ. ու անիղձօրէն կը պօռային, լրբօրէն ու ճամարտակօրէն կը գոռգռային. «Օրինաց հայհոյող է, դատաճանող է, մեղաւորներու ու մաքսաւորներու բարեկամ է, կայսեր թշնամի, Տաճարը քակող և ապստամբ, յիշափոխական մըն է բռնապետական շարքերուն դէմ»: Այս ամէնը՝ ըստ Եբրայեցւոց՝ գուցէ իրականութիւն լինէր, եթէ Անոր պատմութեան վերջը, կարծեցեալ յաղթուողի, նախապատուի վախճանը լինէր. զրպարտութիւններու այս շարքերուն, արիւնկզակ ամբոխի այս արամադրութիւններու անբարոյ ընթացքը զոր ծնաւ արիւնորբու գործը, Անոր կեանքի վերջաւորութիւնը

չէր կիսապէրէր. ընդհակառակն կեանքերու կեանքի լոյս ու յոյս, փառալի ու անվերկանալի ծնունդը կը ծնէր, ու կ'արձագանգէր և կը զօղանջէր ընդ ոլորտս աշխարհի, ու այդ ձայնը մինչեւ մեր օրերը, մնդի և շատ ուրիշներուն ու մինչեւ յաւիտենականութիւն: Յարեա՛ւ: Չարերու ու վատերու սպիրտաւ ու ապերախտ այս գործը, որ ճշմարտութեան դէմ խաղ ու մահ կը պօռար, արդէն կանխաւ նախասեւեւած ու նախասահմանուած փրկագործութեան ուղիւ, կտրուկ ու որոշ ճանքան էր, ճաշակելիք պատւոյն էր, թէեւ ճաշակողին դառն. և որուն արդիւնքը պիտի լինէր Յարութեան — ազատութեան — մեծագործութիւնը, անօրինակ ու սարօրինակ սիրտգործութիւնով: Այն օրէն ցայսօր գերութեան ջնջումին, սարկութեան բարձումին, բանակալութեան խորտակումին, բարբարոսի անկումին, ամբարտաւանութեան փճացումին, գողութեան փրկումին, կեղծարարի զիմակադրկումին, ստութեան նշաւակումին, խարդաւանանքի սրբագործումին, խաւարի կապտումին, սատանի յաղթումին, մառախուղի ցրցքումին, մէզ մութի բարձումին, մահացուցիչ կեանքի անմահացումին մեծ ու պանծալի յաղթանակի Չատիկը, Հայոց Չատիկն է որ կը տօնենք զոհերով ու արիւններով դեռ անդադրում: Յարուցելոյն մարդնդութեան նշանակութիւնը և բոլոր յոյսերու ու ակնկալութիւններու կեանքը Յարութեան փառաւոր իրողութեան վրայ հիմնուած ու հաստատուած է: Եւ ո՞վ էր սակայն այն որ կը քալէր անասլիքաք ու անխառն, ո՞վ էր որ կը փութար անմոլար ու անցյալ, և կը բուրէր քաղցր բոյր մը իւր աջուձախ, ուր գարշ ու ազտեղի ապականութիւններ մարդածին Սաղիմ մը ողջոյն ապականած ու անբարոյացուցած էին: Դա՛ Սաղիմ զոհն էր, որ անմեռնչ կը քալէր և նոյնչափ անվրդով կը նայէր աշխարհի վաղանցուկ իրերուն ու ծագելիք փորձանքներուն, ու միշտ յարափոփոխ վիճակներուն: զիտէր ու կամովին կը գնար դէպի վտանգը, դէպի Սալը. կը զգար թէ իր զլխէն կ'անցնէր ու պիտի

անցնէր մութ ու լուրթ ամպեր, շունդալից, սրտալից կայծակներ, կատաղութեան, կծու մոլեռանդութեան տեղատարափներ, զրպարտանքի, բամբաստանքի, նախանձի, հեռի, բարկութեան ու վրէժ. խընդրութեան, հայհոյանքի ու թշնամանքի հեղեղներ, ու զիտէր նոյնչափ, թէ այս ամենին միտնակ ու բոլորովին միայնակ դէմ յանդիման պիտի դնուէր. զիտէր թէ այսօր ու վաղը թագաւոր պիտի հռչակուէր ժողովուրդին կողմանէ, բայց միւս օրերուն ալ իբր չարագործ պիտի կշտամբուէր. զիտէր թէ բազմութիւն մը զինքը պիտի երկրպագէր իբրեւ բարի ու արդար, սակայն նոյն այդ բազմութիւնը իբրեւ օրէնքը հայհոյող, կրօնը դաւաճանող պիտի ամբաստանէր. քահանայապետի իշխանութիւնով վաղուան խարաւանդը, անբարոյ գահիկ ամբօխէ մը պիտի խորագոյնուէր թշնամի ու ապստամբ սիրող կարգերուն, ու նորէն կը քալէր և կ'ընէր իրենիւրուն: Երթանք դարձեալ: Իրենիւրը կը յիշեցնէին թէ երէկ ու առջի օր քեզ կը հալածէին, սպաննել կ'ուզէին ու դուն նորէն երթանք կ'ըսես, ու այն կը պատասխանէր. «Ո՞չ երկոտասան ժամ է աւուր, եթէ ոք զնայ ի տուընջեան ոչ դայթակլի, զի զլոյս աշխարհիս այսօրիկ տեսանէ»: Բաւական է որ մարդ լոյսին ու ազատութեան կը քալէ, թող չգայթակղի, զի զլոյս աշխարհիս այսօրիկ տեսանէ, թող չյուսահատի, չկքի, չերկընչի: Լոյսն ու ազատութիւնը իրեն զեկը, առաջնորդող աստղը պիտի լինի:

Գնա՛, Հայ ժողովուրդ, ի տուընջեան, գնա՛ առ լոյսն ու յոյսն, գնա՛ մեծ տօնին այն Յարութեան որ քեզի քօւ մահացած ու գերիացած, օտրկացած վիճակիդ աւելի պէտք է. դա՛ քու կեանքն է, քու ջահը, փարօսն ու զեկը. զի դու ազգերու շարքին մէջ անդեկ նաւու մը հանդոյն ես. ամէն ալիք քու դէմդ խոտացած են, ամէն կոհակ քառմիսացած, աջդ ու ձախդ խաբակ ու խուրթ ձեռք ձեռքի տուած քեզ կտոր կտոր ընել կ'ուզեն. խոչար կէտեր ու կեւրածաններ, կ'ուզեն ողջ կուլ ու փուլ-սող, ու դուն ինքնակորսյս ու ինք-

նամոռաց . ու դարձած խելայեղ , առաջնորդող Աստղին ալ չես նայիր , ու ճիգեր ու ջանքեր կ'ընես . անդեկ ու աննաւապետ պրծիլ ու փրկուիլ կատղած ծովու մը ամենի մարտէն , որ ո՛չ աղաչանքի կ'ունկընդրէ և ո՛չ պաղատանքէ կը հասկնայ :

Գնա՛ , Հայ ժողովուրդ , ու քալէ անոր պէս , ինչպէս Ան որ հասած կը տեսնար զոհի ժամն և մօտիկցած Բեթելայ սարին , և կը քած խաչի բեռին տակ , քրտինքով խնամեա՛ծ , թշնամիներով պաշարուած . ու բիւրաւոր նախատինքներու տարափին տակ կը բարձրանար դէպ ի Գողգոթա , դէպ ի այդ սարը ուրկէ պիտի ծնէր ու յորդէր , պոռթկար ու աղաղակէր անառակ մարդկութեան , ապախտ ու պէքաղդ ժողովրդեան ազատութիւնը , որոնք խաւարը առաւել կը սիրէին քան լոյսը . այնչափ կուրցած էին որ լոյսի մօտիկութիւնը չէին նշմարեր : Ապաշնորհ մարդկութիւնն այսպէս է . բարեկամը թշնամի , լոյսը խաւար կը ճանչնայ :

Մեծ օրուայ մեծ ու աշխարհաճակ ժամը կը հասնէր . անարգութեան գործիին լուսցումը պիտի կատարուէր , տիեզերքին Անտանելին , երկնքի Անբաւելին , հրեշտակներէ Երկրպագելին , զուարթնոց պաշտելին , Հօրը սիրելին , Հոգիին խնկելին , պիտի բաւէր ու տանէր թշնամութիւններու անառակի խժդժութիւնները . մշտնջեկանին , հնաւուրցին քովիկը բազմողը , աւազակներու քովիկը ու միասին խաչուողը պիտի լինէր :

Բայց , ո՛վ դու անսահման բարի , անմըման արդար , ալլման սէր , ճշմարիտ վարդապետ , ուղիղ քարոզող , ճշմարտութեան ուղի , ինկածներու պաշտպան , լքուածնեւրու յոյս , ամբարտաւաններուն հակառակը , գոռոզներուն ջախխիչը . ա՛լ թող տուր որ ողջ ու ամբողջ խմու դառնութեան բաժակէն մինչեւ ցմրուր , որ քեզի կը մատուակեն վրէժխնդրութեան գինովները անպատկառօքէն , ու այն ալ քու ձեռագործներդ . թոյլ ու թող տուր ստեղծագործ ձեռքերդ որ ստեղծածներդ դամին կոշտ ու մոշտ սեպերով , բարձր ու վեհ բռնէ լուսնկայ ճակատդ որ հող թէւեւ առակ նշաւակի միտուով , և սակայն յաւիտենական ճշմար-

տութիւնով գրեն թէ թագաւոր է ճշմարտութեան ու Արդարութեան : Հապասուրք ու նուրբ կողերդ բաց ու պարզէ , որպէս զի ծակեն ու ծակծկեն այն գործիքներով , զոր դուն ստեղծեցիր մարդիկներու պէտքին միայն , բարեոք աշխատութիւններու համար լոկ , և չէ թէ քեզի դէմ մահացու գործիք մը կերտուիլու նպատակաւ . . . Լուռ կեցար այս ամենին դէմ , որպէս զի ամենէն խորունկ պատասխանը տուած լինէիր ամբարշտ մարդկութեան , և թողուցիր որ անգիտակցօրէն և ապաշնորհօրէն կտխեն , խաչեն ոչ թէ քեզ այլ ամբողջ Տիեզերքը : Ու դուն մահուան ցաւերուն մէջ կը լսես կատաղութենէ արձկուած ու հայոյութիւններով համեմուած ձրի ու սրի խօսքերը .

«Ե՛լիր այժմ խաչէդ , ի՛ջիր , ու Տաճարը քակելով երեք օրէն չինէ» : Բայց ի՞նչպէս ի՛ջնէիր ձեռքերդ ու ոտքերդ գամուած , կեանքդ ոգեւորած ու թշնամիներդ ալ վարը ուրախացած ու խնդուքներով դիւաացած ու դեռ կատղած : Կա՛ր մէկը աշխարհի վրայ , և պիտի կրնա՞յ գտնուիլ , որ իր անսահման զօրութեան , անբաւ կարողութեան , անեզր իշխանութեան վրայ բոլորովին ու ամենեւին հասու լինէր , ու այդ ամենահաս , ամենաբաւ զօրութիւնդ պահուան մը տկարութեան մէջ իսկ յոյժ դօրաւոր նշանակներով դուքս կուգար : Մէկ կողմէն կեանքի աղբիւր միւս կողմէն սըրբաբար արիւն , մին պիտի լուար դարաւոր մահուան ալտոտութիւնը , միւսը պիտի սրբէր անոր թողուցած ժանդը . ու թափեցիր ողջ աշխարհի գլխին որպէս զի սրբաբուի մաքրուի , նուիրագործուի : Գու կենդանութիւնովդ աշխարհի սքանչանքն էիր , մահովդ ալ փրկութիւնը . ու դեռ այդ ժամուան մէջ հազաբաւորներ ելած էին գերեզմաններէն , շատերուն կապանքը քակուած , պատանքները պատուած ու յարութիւն կ'առնէին , վէմիդ հետ խաղի եւ լան բայց իրենց բրգացած , հպարտացած , լեռնացած , դիզացած վէմերն աւազներու անապատը չինեցին միշտ չոր ու անբերրի և յաւիտեան : Զոհիդ կրակը միշտ վառ , բոցը միշտ փառ , մատաղիդ ծուխն ու բոյր յար անուշ ու ինկանուշ . հապա խաչիդ

օժոճմը, աշխարհի լուսացմանը անջինջ ու
ալ աննկնջ: Փա՛ռք քու Յաղթութեանդ
ու խաչիդ յաղթանակին որով մեզ զկեանս
պարգեւեաց:

ԳԵՈՐԳ Մ. Վ. ԱՍԼԱՆԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

Մ Ա Յ Ր - Ա Թ Ո Ռ

Կովկասահայ թերթերու կանոնաւոր հե-
տեւող մը, հոն, վերջին ատեններս, Մայր
Աթոռին վրայ գրուածները կարդալով, չպի-
տի կարենայ որոշ գաղափար մը կազմել
Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան արդի
վիճակին վրայ: Իրարու հակասական են
տեղեկութիւնները. ոմանք կը գովեն Մատ-
թէոս Բ. Կաթողիկոսի գործունէութիւնը,
և այլք կը քննադատեն զայն:

Հոս Կ. Պոլսոյ մամուլն ալ գրեթէ ան-
գիտակցաբար կամ գիտակցաբար, տրձա-
գանգ կ'ըլլայ Կովկասէն եկող այս լուրե-
րուն, վասն զի իրեն միջոցներ կը պակսին
ուղղակի տեղեկութիւններ ստանալու Ա-
մենայն Հայոց Կաթողիկոսութեան ասիոնէն:

Այդ հրատարակութեանց մէջ կուսակ-
ցական և շահակցական հաշիւներ պակաս
չեն, և հոս ասոնք ինպատու իրենց դատին
շահագործողներ կան. հետեւաբար կ'արժէ
որ անկողմնակալ կերպով դատուին Մայր
Աթոռի գործերը: Ամենայն Հայոց արդի
Կաթողիկոսին հեղինակութիւնը ուրանալու
և զայն վարկաբեկ ընելու համար, եթէ
Կովկասի մէջ, Հոլիւ և իր համախոհները,
հաւաքաբար կը գործեն, իրենց վերջին
ընտրութեան մէջ կրած յուսախաբութիւնը
վերստին չկրելու համար յաջորդ ընտրու-
թեան մէջ, հոս ալ կան անձեր որոնք դառ-
նացած են Կաթողիկոսին անձին դէմ, և
զայն քննադատելով կը կարծեն թէ իրենց
դատին ծառայած կ'ըլլան: Այսպէս՝ Կաթո-
ղիկոսին դէմ են և զայն վարկաբեկելու
ջանադիր, Երուսաղէմի հաշուետոյս իւր-
բակին պատկանողները և անոնց բերանը
հանդիսացողները:

Պէտք չէ մոռնալ նաեւ կուսակցական

մամուլին հակառակութիւնը Կաթողիկոսին
դէմ, թէ իբր սկզբունքի խնդիր — վասն
զի Կաթողիկոսութիւնը իրենց համար Զա-
րիզմին մէկ տարբեր ձեւն է — և թէ իբր
անձի խնդիր, — վասն զի Մատթէոս Կա-
թողիկոս, արհամարհելով իր կողմն կանգ-
նող յոխորտութիւնները, ամէն անգամ որ
առիթը ներկայացաւ յայտարարեց թէ և ոչ
մէկ կուսակցութիւն չի ճանչնար և ամէն կու-
սակցութենէ վեր կը մնայ:

Հետեւաբար մամուլը անկողմնակալ կեր-
պով պատկերացնելու վիճակին մէջ չէ էջ-
միածնայ վիճակը, յոռի կամ լաւ տրտ-
մադրուած ըլլալով Կաթողիկոսին հանդէպ:

Ընդգրկմալի կողմին քննադատութիւն-
ները քանի մը գլխաւոր կէտերուն շուրջը
կը դառնան, որչափ որ կ'երեւայ Կովկա-
սահայ մամուլին գրուածներէն:

Այդ գլխաւոր խնդիրներն են.

Ա. Միաբանական անհամերաշխութիւնը.

Բ. Երուսաղէ վրդ.ի կարգաթողութիւնը.

Գ. Յուսիկ վրդ.ի զիւանապետութենէ
հրաժարականը:

Երեքն ալ լուրջ քննութենէ մը անցնե-
լով՝ պիտի տեսնենք թէ այդ քննադատու-
թիւնները ո՛ր աստիճան անիրաւ են:

Ա. Միաբանական անհամերաշխութիւնը
նոր բան մը չէ էջմիածնայ վանքին մէջ:
Մասնաւորապէս Գէորգ Գ. Կաթողիկոսի
օրերէն սկսեալ, երբ Գէորգեան ձեմարանի
և Եւրոպայի մէջ ուսում աւնող եկեղե-
ցականները գոյութիւն առնել և հետընտե-
ցականները գոյութիւն առնել վասնական
կարեւոր տեղ մը գրաւել սկսան վասնական
գործերու մէջ, հիներու և նորերու լոխ
պայքարը սկսաւ: Սակայն Գէորգ Գ. և
Մակար Ա. իրենց անձնական պատկառան-
քովը և հեղինակութեամբը կրցան պահպա-
նել վռնքին մէջ հաւասարակշռութիւնը,
և երկու կուսակցութիւնները գէթ արտա-
քին ձեւերուն մէջ իրարու համերաշխ պա-
հել: Մկրտիչ Կաթողիկոսի ատեն, դժբախ-
տաբար չկրցաւ պահպանուիլ այդ արտա-
քին պատկառանքը, նախ անոր համար որ
Կաթողիկոսը ինքը ձեւականութեանց հա-
կառակորդ, պարզասէր և նոյն իսկ կրթ-
նունք ըսել անկարգապահ անձ մըն էր, և
չէր կրնար, կամ չէր ուզեր, ագդու միջոց-

ներով իր մականին տակ խիստ կարգապահութեան մը մէջ պահել միաբանները, որով երկպառակութիւնը ոչ միայն մեծցաւ, այլև յայտնի համարձակ հանգամանք մը առաւ:

Ասոր ոչ նուազ նպաստեցին նաև այն ուժերն մերիկները որոնք անցան Ռուսահայ ժողովուրդին վրայ, նախ կալուածներու գրաւման խնդրոյն առնել և Բ. Սահմանադրութեան հաշակման պահուն:

Մերունի կաթողիկոսը՝ հետզհետէ աւելի տկարացած, կը կարօտէր նեցուկներու: Խուճը մը մարդիկ զինքը չընկալածեցին յանուն յառաջդիմական գաղափարներու: Այսպէս, Մկրտիչ Կաթողիկոս, ոչ միայն թեմական առաջնորդներու ընտրութեան իրաւունքը զաւառաց վերադարձուց, այլ նաև կիներու քուէարկութեան իրաւունքը առաւ, և յետոյ յետս կոչեց իր կոնդակը: Սոյն թոյլ վարչութեան և մասնաւորներու ստացած դիրքին բերմամբ վանքին մէջ ներքին անհամերաշխութիւններն աւելի մեծ համեմատութիւններ առին: Տեղապահին պաշտօնավարութեան միջոցին բնական է թէ մէկ օրէն միւսը կարելի չէր որ այդ խորապէս արմատացած հակառակութիւնները վերնային, մասնաւորապէս որ միաբանութիւնը՝ որ որոշ երկու կուսակցութեանց բաժնուած էր՝ Կաթողիկոսութեան համար ունէր երկու ընտրելի, մին՝ մէկ կուսակցութեան և միւսը՝ միւս կուսակցութեան ընտրելին:

Մատթէոս Բ. Կաթողիկոս կրթելով միաձին հասաւ, բնական է թէ միաբանութիւնը լարուած ուշադրութեամբ մը կը սպասէր թէ ի՞նչ անօրէնութիւն պիտի լինէ կամ մասնաւոր թէ ի՞նչ ընթացք պիտի բռնէ, հանգէպ այն միաբաններուն որոնք իր կաթողիկոսացմանը կուսակից չէին: Սակայն Կաթողիկոսն ինքզինքը կրցաւ ամէն կուսակցութենէ վեր բռնել, և բոլոր անցեալը մոռնալ: Օրինակի համար, իր դիւանապետութեան պաշտօնին մէջ պահեց Յուսիկ վրդ.ը որ կը պատկանէր Իզմիրլեան եպ.ի Կաթողիկոսացման համամիտ չեղող խմբակին, և բնաւ որ և է խտիր չգրաւ երկու կուսակցութեանց մէջ: Սակայն ինչ որ ամէնէն նշանակելին էր և ամէնէն պատուա-

բերը, սա էր որ կամովին հրաժարեցաւ իր քահանայքին ձգուած անուանումները կատարելէ, և բոլոր պաշտօններու ընտրութիւնը թողուց միաբանութեան: Ասկէ առաջ Կաթողիկոսը չընկալածներն իրենց մարդիկն առաջ կը մղէին, խորհուրդներ և թելադրութիւններ ընկով Կաթողիկոսներուն, որով շատ անգամ հակառակութիւններն աւելի կ'արձածուէին, վան զի նախանձութիւններ առաջ կուգային: Էջմիածնայ միաբանութիւնը ներքին մատակարարական օրէնք մը չունի. սովորութիւնները և Կաթողիկոսին կամքը ու հրամանը կը կազմեն իր օրինագիրքը: Ամենայն Հայոց Հայրապետը միապետական զրութեամբ միալսան մը պաշտօնի մը կը կոչէ կամ պաշտօնանկ կ'ընէ, և ոչ ոք իրաւունք ունի խտրուելու: Մատթէոս Բ. Կաթողիկոս, վերջ դրաւ այն դրութեան, և փրկեց իր անձը այս կամ այն կողմ հակելու մեղադրանքէն, որով միանգամ ընդ միշտ բարձրացաւ իր դիրքն յաջա միաբանութեան:

Վերջին մէջ պաշտօններու բաժանումը կատարելու դարձը թողուց ընդհանուր միաբանական ժողովի քուէին, որ իրապէս նոր օրինակութիւն մըն էր Էջմիածնայ մէջ, ուր վեհափառին կամքը ամենայն ինչ էր: Բանի մը հին գլուխ անձեր ասով ոլորեցեցաւ կարծեցին տեսնել Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որուն կամքն իբր թէ ասով կը խոնարհէր միաբանական կամքին առջև, և ոմանք անիրանալի համարեցին էջմիածնայ մէջ այս տեսակ Սահմանադրական կարգերու հաստատութիւնը: Սակայն փորձը ցոյց տուաւ թէ կարելի էր, և հակառակորդներն ալ քիչ քիչ կրցան համոզուիլ, և ժամանակի ընթացքին մէջ հետզհետէ աւելի պիտի մարդուին և հրահանգուին այս դրութեան մէջ: Եւ հիմա որ ոչ ոք միաբաններէն կրնայ ամբաստանել թէ Կաթողիկոսը կողմնակցութեամբ կամ աչառութեամբ այսինչ պաշտօնն այսինչին տուած է, միաբանութեան մէջ ընդհանուր և անխտիր յարգանաց առարկայ դարձած է Կաթողիկոսին անձը:

Այս պարագան զինքը վարկաբեկ ընելու աշխատողներու գործին չէր գար, ուստի

հին հակառակութիւններն արծարծելու համար, Մեարոյ կպիսկի ձեռնադրութիւնը խնդրոյ առարկայ ըրին, տարածայնելով թէ Կովկասի փոխարքային հրահանգին վրայ ձեռնադրուած է կպիսկոպոս, առանց թեմակալ ըլլալու, մինչ իր երեք օծակիցներն առաջնորդներ էին: Կովկասի փոխարքային թելադրութիւնը բացարձակ սուտ մըն է և մասնաւորապէս մէկ հնարքը անոնց, որոնք երկիւղ ունին թէ Մեարոյ կպիսկի կարգով թիֆլիզի առաջնորդ: Մատթէոս Կաթողիկոս Մեարոյ կպիսկի ձեռնադրելու պարտաւորուած էր, Սինոդին մէջ չորս կպիսկոպոսներու օրինական թիւը լրացնելու համար, և ոչ թէ ուրիշ պատճառով: Էջմիածնայ միաբանութիւնը մօտէն ճանչնալու առիթ ունեցողները կը հաւատեն թէ սոսկ իրենց անձնական արժանեօք կպիսկոպոսական աստիճանի բարձրանալու սրժանի ուրիշ անձեր ալ կան միաբանութեան մէջ, սակայն տակաւին շատ երիտաւարդ են:

Ամէն պարագայի մէջ վեհ. Կաթողիկոսը, ապագային այս քննադատութենէն ալ զերծ մնալու համար, կրնայ միաբաններու կպիսկոպոսացման խնդիրն ալ ենթարկել միաբանական քուէին և անոր հաւանութիւնն ստանալէ յետոյ կատարել ձեռնադրութիւնը:

Բ. Երուանդ վրդ. անուն միաբան մը որ երբեմն Արարատի խմբագրութիւնը կը վարէր, վերջերս կարգաթող եղաւ. իր չափազանց հակակրօն հրատարակութիւններն ընդհանուր դայրոյթ առաջ բերած էին միաբանութեան մէջ: Շատեր կը պահանջէին որ Կաթողիկոսը կարգաւոյժ հռչակէ յիշեալ վարդապետը, որ գայթակղութիւն կը սրբուէր չորս կողմ: Կաթողիկոսն համբերութեամբ իրաց վախճանին կը սպասէ, միշտ հանդարտեցնելով իրեն դիմողները, և հաւաստելով թէ իր միջամտութեան պէտք չկայ, քանի որ անիկա արդէն ինքնին պիտի թողու սքեմը: Ինչ որ Կաթողիկոսը գուշակած էր, կատարուեցաւ: Սր մը Երուանդ վրդ. թուղթով մը խնդրեց որ իրեն արտօնուի եկեղեցական սքեմը ձգելու և աշխարհական դառնալու: Բնական է թէ

ոչ ոք կրնար արգելք ըլլալ: Հիմայ աշխարհական դարձած է, և կ'ըսուի թէ պիտի ամուսնանայ ամուսնալուծեալ կնոջ մը հետ, որուն հետ նախապէս արդէն յարաբերութեան մէջ ըլլալ կը կարծուէր: Հիմայ կը հասկցուի թէ Երուանդ վրդ. այդ բուռն հրատարակութիւններն ընելով նպատակ ունէր իր վրայ Կաթողիկոսին դայրոյթը հրաւիրելու, և ստիպելու որ Կաթողիկոսը զինքը կարգաւոյժ ընէ, և ասով ինք դասալիք մը ըլլալու տեղ հալածուածի մը կերպարանքը առնէ: Սակայն Մատթէոս Բ. յաջած էր այդ փորձութեան ալ յաղթել և զինքը չարաչար խայտառակել, իր փորձառութեամբ անհեղինակ այն վախճանը որուն կը դիմէր այդ վարդապետը: Ասով հանգերձ թիֆլիսի լրագիրներէն ոմանք չեն դադարիր այս պարագան խեղաթիւրմամբ ներկայացնելէ, և կ'ուզեն անուպատ հետեւութիւններ հանել Կաթողիկոսին և Էջմիածնայ գործերուն համար:

Գ. Յուսիկ վրդ. ի դիւանապետութենէ հրաժարականը արդէն բացատրուեցաւ թէ Կաթողիկոսին կամքէն անկախ պատճառներով տեղի ունեցած է, և ինք որ և է պատասխանատուութիւն չունի անոր մէջ. հետեւաբար ռուսահայ թերթերէն ոմանց չարամիտ հրատարակութիւններն իրենց նշանակութիւնը կը կորսնցնեն: Կառավարական խիստ հակողութիւնը, որ կասկածի մը վրայ կը գործողորուէր Յուսիկ վրդ. ի վրայ, միակ պատճառն է այն արձակուրդին, որ պարտաւորուեցաւ տալ Կաթողիկոսը այդ վարդապետին, անոր յաջորդ կարգելով Բագարատ վրդ. Վարդապետանը, որ վերջին Կաթողիկոսական ընտրութեան առաջին իր վրայ շատ խօսեցնել տուաւ, իբր ընտրելի այդ բարձրագոյն պաշտօնին:

Ահաւասիկ Էջմիածնայ շուրջը յուզուած խնդիրները, և իրենց լուսաբանութիւնները:

ԱՐՇԱԿ Ա. ԱՂՊՕՑԱԾԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆ ՊԵՏՔ Է ԲԱՐԵՓՈՒԵԼ՝ ՅԷ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայ եկեղեցին բարեփոխելու հարցը, որ տասնեակ տարիներէ ի վեր գոյութիւն ունի, և ա՛յնքան միտքեր տանջած ու յոգնեցուցած է՝ այսօր մանաւանդ կենսական հարցի մը հանգամանքը առած է կարծես: Եկեղեցւոյ ինքնակոչ բարեկարգիչները—կրօնական ըլլան անոնք թէ՛ աշխարհական—կ'երեւի այն համոզումը գոյացուցած են, իբր թէ հայ ազգին փրկութիւնը այդ բարեկարգումէն կախում ունեցած ըլլար, և առ այդ լրջօրէն և հրատապարկաւ սկսած են խնդիրը հետապնդել: Հետապնդումի այս լուրը Գերմաներէն թերթերն են որ կուտան մեղի, թէ «Ազատ Քրիստոնէութեան համալսարանային համաժողովին մէջ կարգաթող ուսնահայ վարդապետ մը՝ Երուանդ Տէր-Մինասեան» պիտի պաշտպանէ Հայ եկեղեցւոյ վերանորոգութեան (Բարեփոխում) խնդիրը»:

Երբեմնի Երուանդ վրդ. և իր կրօնական գաղափարակիցները, որոնք ամենքն ալ Գերմ. համալսարանականներ են, իրենց ուսանողական շրջանին մէջ իսկ, անողոք յեղաշրջականներ կը թուէին արդէն, և ասոր ապացոյցը տուին, վերջերս, Տէր-Մինասեանի կողմի խմբագրուած և հրատարակուած, «Հայ եկեղեցւոյ Բարեփոխումը» անուն մէկ տետրակով, որ Սինդիկոն հրատարակաւ Auto-da-fé-ի արժանոյցաւ:

Արդարեւ Տէր-Մինասեանի այդ երկը, ոճի և խմբագրութեան տեսակէտով փայլուն գլուխ-գործոց մ'է ինքնին, բայց դժբախտաբար ա՛յն գիտակոն օրէնքներն ու սկզբունքները, որոնց համաձայն Պ. Երուանդ, կ'ուզէ չափել, ձեւել ու բարեփոխել եկեղեցին, կը նսեմացնեն այդ փայլը, և բացորոշապէս ցոյց կուտան թէ Irréligion de l'Avenirի հեղինակէն արտառոց գաղափարներով մնած մէկն է ինք, և անոնցմէ թելադրուած՝ կ'ուզէ բոլորովին տարբեր կրօնք մը, տարբեր եկեղեցի մը և կրօնային նոր կարգ ու սարք մը ստեղծել:

Ես ա՛լ կ'ընդունիմ Պ. Երուանդի և իր

համախոհներուն հետ, գիտական փորձառութեան վրայ հիմնուած այն վարդապետութիւնը թէ հոն ուր արտաքին դրդում կամ թելադրութիւն և ներքին շարժում չկայ, հոն յետադիմութիւնն անխուսափելի է, և այս՝ ամէն կազմակերպութեան (Organisme) համար: Բայց եկեղեցին ալ իբրեւ կազմակերպութիւն—և է իսկապէս—նկատելով, գիտական օրէնքներու նմարկել խզճի և բանականութեան դէմ կը գտնեմ: Ստոյգ է որ մեր եկեղեցին աստուածային հիմնադրութիւնով մը նուիրագործուած մարդկային կազմակերպութիւն մըն է: Անիկա ունի իր մեքենական յորինուածութիւնները. սակայն այդ մեքենան անգործութեան չէ՛ դատապարտուած բնաւ, անիկա միշտ շարժման, թելադրումի և դրդումի մէջ է. և ասոր ապացոյց ալ ա՛յն է որ, այդ յաստատուած լարուած մեքենան իր յարաշարժութեամբ ա՛յսքան տարիներէ ի վեր գոհացուցած է հայ ժողովուրդին կրօնական, բարոյական և ընկերային պէտքերը:

Մեր եկեղեցին, իբրեւ ժողովրդական եկեղեցի, իր ողատութեամբ և անխտրականութեամբ իր մայրական ծոցին մէջ խնամած, պահած ու պահպանած է, ո՛չ միայն հայ ազգին, այլ և իր հովանաւորութեան կարօտ ժողովուրդներու անունը, աղօթին դարաւոր փառքը, պատմութիւնը, և անոնց ինքնուրոյնութիւնը:

Մեր եկեղեցին, իր ժողովրդային յօրինուածութեամբ և զմայելի կազմակերպութեամբ, ամէն ժամանակի համար գլինքը կազմող ժողովուրդին հոգեբանական տրամադրութիւններուն համապատասխանած, և պատշաճած է շարունակ ժամանակի ոգւոյն, ձգտումներուն, և սովորութիւններուն: Վերջապէս Հայ եկեղեցին, իբրեւ ռամկավարական բարոյականի մարմնացում և կազմակերպութիւն, իր պարտականութեան սուրբ ու վսեմ դաշտին վրայ կանգուն մնացած է միշտ: Իր ներքին մեքենական յօրինուածութեան շարժիչ ուժը (Moteur) այդ պարտականութեան լիովին կատարումն է, որուն մէջ չէ թերացած բնաւ, հովուելով և խնամելով հօտը՝ անխտրաբար:

Արդ, ասիկա ապացոյց մըն է թէ, Եկեղեցին կենսունակութեան (Vitalité) մէջ է, չարժման մէջ է. և եթէ չարժման մէջ է կը նշանակէ թէ կը յառաջդիմէ, որովհետեւ հոն ուր որ շարժում կայ, հոն յառաջդիմութիւն կայ: Մեզի կը մնայ ուրեմն այդ շարժող մեքենային ընթացքը չկասեցնել, և պահել զայն իր իսկութեանը և լիակշիւթեանը (intégrité) մէջ. այլապէս արտաքին (գիտական) ու է նորոգութիւն կամ յապաւում կը խանգարէ մեքենային կանոնաւոր ընթացքը, և ահա ա՛յն ատեն միայն կը սկսի սոսկալի յետադիմութիւնը:

Արդարեւ այսօր անուրանալի իրողութիւն մըն է թէ մեր Եկեղեցին զուրկ է նախկին ռաւիալտարական հանգամանքէն, և կարծես չի պատշաճիր այլեւս մեր աւօրեայ կեանքին ու կացութեան: Ցաւ ի սիրտ կը խոտովանինք թէ անիկա կորսնցուցած է իր նախկին պարզութիւնն և լրջութիւնը: Եւ ասոր պատճառը նախ հայ եկեղեցականութեան անկումին, և երկրորդ դարերու ընթացքին մէջ օտար ապականիչ ազդեցութիւններու տակ որդեգրուած միջանի արարողութիւններու կրկնութեան մէջ պէտք է վնասուի: Այո՛, խճողուած է ան արտաքին անպէս interpolationներով, որոնցմէ պէտք է մաքրել զայն, տալ անոր իր նախկին պարզութիւնն և լրջութիւնը. և ո՛չ թէ առանց հետեւանքը նկատի առնելու, գիտականօրէն բարեփոխելու աշխատիլ, այսինքն թէ ջնջել այն աստուածաբեալ Ս. Խորհուրդները, այն Հայկական հին արարողութիւններն ու աւանդութիւնները, որոնք հիմը կազմեն մեր Ս. Եկեղեցւոյն և ազգային գոյութեան:

Գիտականօրէն բարեփոխել՝ հիմնովին բարեշրջել, մաքրել կը նշանակէ. ըստ իս այդ գիտական մաքրագործումի բովէն պէտք է անհրաժեշտօրէն անցնել, ո՛չ թէ Եկեղեցին այլ եկեղեցականութիւն, որուն անվայել ընթացքին և տգիտութեան պատճառաւ, բուն իսկ հայկական ծէսերն ու արարողութիւնները, որոնցմով միան ու ներշնչուեցան մեր պապերն ու հայրերը, կորսնցուցած են այլեւս իրենց երբեմնի բարոյացուցիչի (moralisatrice) վսեմ դերը,

կորսնցուցած են իրենց իսկական նշանակութիւնը, պատմական, բարոյական և հոգեկան արժէքը:

Այսօր մեր եկեղեցականութիւնը — անշուշտ բացառութիւնները յարգելով — Եկեղեցին և իրենց սքեմը պարզապէս ապրուստի միջոց միայն կը որժաճեն:

Գալով իրենց բարոյական պարտականութեան, տարապարհակ աշխատութիւն մը, անտանելի բեռ մը կ'նկատեն զայն: Եւ ինչ որ ցաւալի է, իրենց փառասիրութեան և ընչաքաղցութեան գոհացում տալու համար, թէ՛ հրապարակաւ և թէ՛ իրենց նուիրական պարտականութիւններու կատարման միջոցին, այնպիսի անվայել ընթացքի մը մէջ կը գտնուին, որ յաշտ ժողովրդեան անհանդուրժելի դարձած է իրաւամբ:

Եւ այս գայթակղալից արարքներուն ի տես, տակաւին կ'ուզենք որ ժողովուրդը Եկեղեցիէն չաւժանայ. եկեղեցականներու հանգէպ բարոյական և նիւթական պարտականութիւնները կատարէ, յարգէ ու պատուէ: Մեր ժողովուրդը միշտ պարտաճանաչ եղած է, յարգած ու գնահատած է արժանաւորը, և «Մշակն արժանի է վարձու իւրոյ» խօսքը շատ բաւ կը համկնայու կը գործադրէ, պայմանաւ որ սակայն մըշակը արժանի ըլլայ իր վարձքին: Իսկ այժմ եթէ երբեք անիկա անտարբերօրէն կը վերաբերի եկեղեցիին, կրօնքին և իր հաւատքին հանգէպ, պատճառը ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ իրենց սքեմին անարժան կղերականներու յուր ընթացքը. ընթացք մը, զոր անըմբռնելի և սխալ արամաբանութեամբ մը մեկնելով, Եկեղեցին բարեփոխելու կ'աշխատինք իր թէ քաւութեան նոխազը ըլլար ան...

Է՛հ, բաւական է որքան տուժեցին Եկեղեցին, կրօնքը և խեղճ ժողովուրդը: Բարեփոխումի կամ աւելի ճիշտն ըսելով, մաքրագործումի փրկարար ժամը հնչած է այլեւս, զօրաւոր ձեռքի մը գոյութիւնը անհրաժեշտ է, որպէս զի հեծանոցն ի ձեռքին սիբէ ու մաքրէ զալիւր:

Մաքրագործումի այս վսեմ պարտականութիւնն անշուշտ կրօնական իշխանու-

թեան կը վերաբերի, բայց արդեօք ի՞նչու չաթափիր իր յաւիտեանական թմրութենէն: Ամէն պարագայի մէջ պէտք է լաւ գիտցած ըլլայ թէ, ժողովուրդին արդար զայրոյթը գերազարգիւ աստիճանին հասած է, և ստիպուած է մարտագործումի այդ պարտականութիւնը ինք անձամբ կատարել որովհետեւ կը զգայ թէ բաւական է որքան լուեց ու համբերեց:

Սկիւսար

ՍՈՒՐԵՆ ՎՐԴ. ԳԱԼԵՄԵԱՆ

ՕՏԱՐ ԷԶԵՐ

ՆԵՐԲՈՂ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ

Մարդկային ընկերութիւններու առաջին օրերէն ի վեր մինչեւ Յիսուս Քրիստոսի գալուստը, մինչդեռ աշխարհի մէկ անկիւնին մէջ առանձնաշնորհալ ցեղ մը կը պահէր յայտնեալ վարդապետութեան աւանդը, ո՞վ, կ'աղաչեմ ձեզի, ըսէք ինձ, ո՞վ սորվեցուց նախնական այլանդակ կրօնքի ու յաճախ անհիթիթ պաշտամունքներու տիրապետութեան ներքեւ եղող մարդոց, թէ ունի հոգի մը և աղատ հոգի մը, կարող դործելու չարը, բայց աստակ նսեւ ընելու բարին. յալթանակներու բռնութեան հանդէպ և տկարներու գրեթէ տիեզերական ճնշումին ատեն ո՞վ սորվեցուց թէ ուժը չէ ամէն ինչ, և թէ կան անտեսանելի այլ նուիրական իրաւունքներ, զորս զօրաւորն ինքնին պէտք է յարգէ տկարներս մէջ:

Մարդիկ որմէ՞ ընդունեցին սա ազնիւ սկզբունքները թէ աւելի գեղեցիկ է վրաստանութիւն ներշնչել քան խաբել, թէ արժան է իշխել կիրքերու, ժուժկալ միալ նոյն իսկ օրինաւոր հաճոյքներու ծոցը. ո՞վ թեւադրեց անոնց սա՛ մեծ խօսքերը թէ բարեկամ մը ուրիշ Նա մըն է, իր անձէն աւելի պէտք է սիրել բարեկամները, և բարեկամներէն աւելի իր հայրենիքը, և իր հայրենիքէն աւելի մարդկութիւնը. ո՞վ աւստից ցոյց տուաւ տիեզերքի սահմաններէն անդին և անոր առագաստին տակ ծածկը-

ուած, բայց ամէն տեղ ներկայ Աստուած մը՝ որ աշխարհը ստեղծեց կշիռով ու չափով, և որ չի դադրիր հակելէ իր գործին վրայ, Աստուած մը որ ստեղծեց մարդը, վասն զի չուզեց իր էութեան անմատոյց միայնութեան մէջ պահել իր վեհափառ կատարելութիւնները, վասն զի ուզեց հաղորդել ու սփռել իր իմացականութիւնը, և ինչ որ լաւ ևս է, իր արդարութիւնը, և ինչ որ ա՛լ աւելի լաւ է, իր բարութիւնը:

Վերջապէս ո՞վ ներշնչեց անոնց այն արտաշարժ և հաստատուն յոյսը թէ այս կեանքէն ետքը՝ աննիւթական, իմացական և ազատ հոգին պիտի ընդունուի իր Հեղինակէն: Ո՞վ ըսաւ անոնց թէ ամէն անստուգութիւններէ վեր կայ գերագոյն ստուգութիւն մը, երկրաշափական բոլոր ճշմարտութիւններու հաւասար ճշմարտութիւն մը. այսինքն թէ մահուան ինչպէս նաեւ կեանքի մէջ, ամենակարող, արդար ու ամենաբարձր Աստուած մը կը նախադասէ իր արարածներու ճակատագրին, և թէ մահուան ստուերներու ետեւէն ինչ որ ալ պատահի, ամէն բան լաւ պիտի ըլլայ, վասն զի ամէն ալ անհուն արդարութեան ու բարութեան մը գործը պիտի ըլլայ:

Կը հարցնեմ ձեզի, Յիսուսի Քրիստոսի գալուստէն առաջ ո՞րպիսի դօրութիւն մը այս ամէնը սորվեցուց ա՛յնքան միղիոնաւոր մարդոց, եթէ ոչ ա՛յն աստուածային բնական յոյսը, որուն հետ այսօր կը վարուին շատ ապերախսութեամբ: Թո՛ղ ժամանակակիցները ուրանան պատմութեան անհակառակելի յիշատակարաններու առջև, կամ թող խոստովանին թէ բնական լոյսն այնքան տկար չէ, մեզ յայտնած ըլլալուն համար ամէն ինչ որ արժէք կուտայ կեանքի, այսինքն ստոյգ և անհրաժեշտ ճշմարտութիւնները, որոնց վրայ կը հանգչին ընտանիքն ու ընկերութիւնը, ընդհանուր ու մասնաւոր բոլոր առաքինութիւնները. և այս ամէնը կ'ընէ այն պաշտօնեաներու ձեռքով, որոնք անգիտակ են տակաւին հին Արեւելքի և մեր հին Եւրոպայի քաջամասթ իմաստուններու, ա՛յն զարմանալի, պարզ և մեծ մարդոց միջոցով՝ որոնք քահանայութեան ու է

զգետ չհագնելով հանդերձ, ունեցած չեն ուրիշ կէտ նպատակի բայց եթէ ճշմարտութեան նախանձայուզութիւնը ու իրենց նմաններուն սէրը, և միայն իմաստասէր, այսինքն իմաստութեան բարեկամ կոչուելու համար հալածանք ու աքսոր կրած են, երբեմն գահերու վրայ ու ստէպ կապանքներու մէջ. — Անաքսագոր մը, Սոկրատ մը, Պլատոն մը, Արիստոտէլ մը, Եպիկտետոս մը, Մարկոս Աւրելիոս մը:

ՎԻԿՏՈՐ ԲՈՒՋԷՆ

Թարգմ. ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ

ԻՆԹ. ԹՐԳՄ. — Ընկերայնականութիւնը լաւ կ'ընէ, եթէ փիլիսոփայութեան զգուշաւոր շախմատներէն ընթանայ: Պրոֆ. Գոլդեյն փաստացի կերպով ապացուցած է թէ ընկերութեան կանոնները զլիովին հակասական է Հայրենիքի մեծ գաղափարին, և թէ՛ ուրեմն Եւրոպայի արդի վիճակին մէջ տկարացման պատճառ մըն է ան. մինչդեռ այսօրուան մեր առաջին բողոքներն է հայրենիքին վերականգնումը: Վ. Գոլդեյնի ըսածին պէս, ստույգ է թէ մարդկութիւնը հայրենիքէն աւելի պիտի սիրենք, բայց երբ հայրենիքը փրկուած ու խաղաղ ըլլայ:

Աւետարանի ռաւմափորական սկզբունքները յաղթող են. անոր համար «Ապագայ կրօնը»-ին հեղինակ ընկերարան Պ. Charles W. Eliot այսպէս կ'եզրուակայնէ. «Բնականորդ Գարր հիմնական ներդաշնակութիւն պէտք է ունենայ Յիսուսի ուղղակի, անձնական ուսուցումներուն հետ, ինչպէս անոնք տեղեկագրուած են Աւետարաններու մէջ: Յիսուսի մարդկութեան տուած յայտնութիւնը այսպէս աւելի սքանչելի կը դառնայ քան երբեք:»

Տ. Վ.

ՏՈՒՐԹ. Ն. ՏԱՂԱՍԻԱՐԵՍԱՆԻ

ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Ուրուագիծ պատմութեան Հայոց, ի սկզբմանէ մինչ ցԱրշակունի հարստութիւն: Գին 5 դրուշ:

Հայոց հիւն կրօնները. — Գին 6 դրուշ:

ԳԻՒՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Զատիկն երկրորդ օրը, իրիկուան ուշ ատեն կը հասնինք Գօնչա, երկու հարիւր տունով զուտ յունական գիւղ մը, Իգմիրի ծովածոցին մէջ, հիւսիսի դիմաց, հիւսնալի օդով ու ջուրով, կանանչագեղ լեռներու շարքի մը ստորոտը, պողատու ծառերով լեցուն պարտէզներով չրջապատուած և յստակ ու խաղաղիկ ծովը, իրիկուան խորհրդաւոր ցոլքերովը ստուերոտած, առջին պակած, տարածուած, հանգչած: Առաւօտէն, գիւղէ գիւղ, լեռնէ լեռ այնչափ սեղեր այցելած, քաղած ու յողնած ենք որ, հազիւ երկու պատուս բան կ'ուսենք և կ'իյնանք մեր անկողիններուն մէջ, այն հիւսնոցում որ կը գտնուի գիւղին վերի ծայրը, ծովափին վրայ: Հեռուէն, լանթիւնայի ու երգի ծուէններ կը պարեն ծովին մութ ու լուռ տարածութեան վրայ ու կ'արձագանգեն մինչև մեր բաց ձգուած պատուհաններէն ներս. զատիկի տօնական գիւղացիի զուարճութիւններու յետին մնացորդներն են ասոնք որ, ա'լ վաղը, եկեղեցական արարողութիւնէն ու թափօրէն վերջը, կը լիննան և առջին մարդ կը վերսկսի իր գործին, մանաւանդ հիմա որ իրենց էն մեծ զբաղումը ծայր տուած է չերամի հունտերուն բացուելովը:

Երեքշաբթի առտու կանուխ կ'արթննանք կոչնակին անվերջ տինկտանկէն: Վայրկեան մը նախաճաշ, քարափէն անդին ծովին վրայ երկարած ապակեպատ թէրափ մը ծայրը, ուր հիմա թիթե հովի մը շունչին տակ չփչփաղով խայտացող ծովը առաւիլն վրայ կուգայ փչրուիլ մանր մանր. վըժ, վըժ, վըժ, հուռաչալից միներգել: Բոլոր տուններէն մեծ պղտիկ, այր կին դուրս կուգան ձեռքերնին մէյմէկ չվառած մոմ բռնած: Մարդիկ միօրինապէս սև ու մաքուր զգեստներ ունին հագած, կրնանք՝ անհաւատալի կերպով նորոյթէ ինկած բայց նոր ու վարդաբուն մետաքսէ չրջազգեստներով ու շալվարներով են և հնարարեան մազի հիւսքեր, ծաղիկներ ու

ժապաւէններ կը կրեն գլուխնուն վրայ . պզտիկները չլայուցիչ ու պոռոտ գոյներով կերպաներու անպատմելի հաւաքածոյ մը կը կազմեն երբ քով քովի կուգան : Կը հետեւինք իրենց դէպի եկեղեցի որ քարաշէն ու խոշոր , կը զանգուածանայ պզտիկ տուներու եռուգեւումի մը մէջ , լայնի ու տախարակ հողէ բարձրաւանդակի մը վրայ : Դրան առջին մարմարեայ մշտահոս աղբիւր մը , որուն վրայ խաչ մը ու թուական մը կը գծագրուին , կը մրմուռայ սնովերջ , առանց անհանգիստ ընելու , մեղմօրէն : Կը մտնանք պարտէզ ուր բազմաթիւ պզտիկ տղաք կը ճրճան , կը վազվաւտեն , կ'եռեւելին խոշոր թթենիներու շուքին տակ :

Ժամէն ներս մութ է , ամենափ քիչ են լուսամուտները , բայց քիչ քիչ աչքերդ կը վարժուին և առաջին առթիւ՝ անթիւ կանթեղներու ու մոմերու լոյսին մէջէն կ'ընդունարես հաստ , ճերմակ , երկայն սիւններու չարքեր՝ որոնք իրենց բարձրաբերձ գլուխներուն վերեւ կը կրեն ժամուն լայնատարած տանիքը : Քիչ վերջը կը սկսինք աւելի յստակ տեսնալ . ամէն կողմ ոսկեզօծ քանդակներ , ոսկեփայլ մօզայիքներ , ոսկեհուռ իքօններ , կը վաւժին , կը կայծկլտան , կ'ատտեղափայլին հարիւրաւոր մոմերու , լոյսերու , պրիսմակներու արձակած ճառագայթներուն տակ : Մէկ կողմերնիս բոլորածեւ սանդուխտով ամպիոնը , միւս կողմը լոյսերու մէջ փողփողող թաղումը , ամբողջ կը ցոլցան հին ու ազնիւ ոսկիի ու զանազան գոյներու ծաղիկներու յորդութեան ու յօրինած ներդաշնակութեանը մէջ : Ժամուն դրան երկու կողմի գաւիթները , ինչպէս նաև վերնատունը ամբողջովին ծածկուած թրքական վանդակներով , կը մնան մութի մէջ ուր բազմաթիւ կիներու գլուխներ կը գծագրուին , անվերջանալի խաչակնքումներու հետ տարուբերող ու երկրպագող : Պատերը , պատուհանները , սիւները , բարամբունքները , վանդակները յստի ծածկուած են մըշտադալար դափնիի ճիւղերով որոնք առնական օրերու առթիւ հոն խճողուած , չորցած , իրենց ծանրաշունչ բուրմունքներով կը լնջան օդի հոսանքներէ գուրկ մթնոլորտը : Ճակատը՝ խորանին վերեւը ,

հսկայ խաչ մը կ'անշարժանայ իր լայն թեւերը բացած :

Քահանան՝ պատարագւորի հագուստներով կանգնած սեղանին առաջը , բարձր ու գեղեցիկ ձայնով մը կը կարդայ ու կ'եղանակէ . յետոյ դեռասի դպիր մը ամենամաքուր արտասանութիւնով , յուզիչ ու վճիռ ձայնով մը , Աւետարան կը կարդայ իր նախնեաց անմահ լեզուով . յետոյ ուրիշ գեղաձայն դիւղացի դպիրներ կը գեղգեղեն հինաւուրց սաղմոսերգութիւններ , աղօթքներ , շարականներ : Ժողովուրդը մտամոխի ու խոնարհ , սիրտիւսած ու երկիւղած , մոմերը ձեռքին վառած , կ'աղօթէ , կը խաչակնքէ , կ'օրհնաբանէ : Ինչ խորհուրդ , ինչ պարզութիւն և ինչ մըխիթարանք : Պաշտելի լեզու , անուշ խօսքեր , դմայելի ձայներ , լոյսեր , հրեշտակներ , կանաչներ , աղօթք , օրհնութիւն , յիշատակներ , եղբայրական համախմբում , սիրելի մեռելներու հոգեհանգիստ , սիրտերու թեթեւացում , ամէն , ամէն բան կայ հոն , մարդուս հոգին հրճուեցնող ու մխիթարող :

Արարողութիւններէն յետոյ թափօրը կը կազմուի . բազմաթիւ պզտիկ տղաք առջեւէն մէյ մէկ իքօն գրկած . յետոյ դաշներգող ձայնաւորները , յետոյ քահանան՝ զգեստաւորուած ու Յարութեան պատկեր մը գրկած կուրծքին վրայ , յետոյ գրեթէ բոլոր գիւղացիները , կին , այր , տղայ , մէյ մէկ վառած մում ձեռուրնին կ'անցնին , երկար երկար տողանցով մը , ամէն փողոցէ , ամէն տունի առաջքէ , ուր բաց դուռներու առջեւ մէյ մէկ աթոռի վրայ դրուած իքօններ անշարժ մեր անցքը կը դիտեն և ծխացող խնկամաններ թափօրը կը պարուրեն զգլխիչ անուշահոտութիւններով : Տուներուն մէջ գրեթէ մարդ չիկայ , բայց մէկ քանի ծերունիներէ , քալելու անկարողներէ ու հիւանդներէ , որոնք պատուհանի մը առջեւ քշքշուած՝ բախտը կ'ունենան տեսնալու Քրիստոսի Յարութիւնը , լսելու անոր ձօնուած փառաբանական երգասացութիւնները և խաչակնքելու , մխիթարուելու , յուսալու : Տարիներով իրենք ալ հետեւած են այդ թափօրին , երբ երի-

տասարդ էին, երբ քաջառողջ էին, և հիմա թափօրն է որ կուգայ իրենց մօտ, իրենց զգալիությունն ու անյուսությունն մէջ, աւետելու մեղսաւորութիւնը, յոյսի վերածնունդը ու ապագայ կեանքի, յաւիտենական կեանքի մխիթարութիւնը: Տեղ տեղ պատուհաններէն կ'երեւան ալեհեր գլուխներ ու մաշած դէմքեր, որոնք վայրկեանի մը համար ողողուած յոյսի ու երանութեան ճառագայթումով, կը ժպտին ուրուային ժպիտներով, որոնց փոխադարձաբար փողոցէն կը ժպտին բերանաբայ ու

անգիտակից, գոյնզգոյն հագուած պղտիկներ, հրեշտակներ, թռչնիկներ որոնք օր մը իրենց կարգին զառամած, պատուհանէն պիտի դիտեն զուարթ այդ տողանցը Գրիստոսի Յարութեան:

Թափօրը տակաւ կը հեռանայ, ձայները, երգերը կը մարմրին կը դադրին և ծովին յաւիտենական մրմունջը օրհներգութիւններու շարունակութեան մը պէս կը վերսկսի լսուիլ Տիեզերքի անսահման տաճարին մէջ:

ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՅ

ՄՈՌՑՈՒԱԾ ԷՋԵՐ

Արեւուն տակ նոր բան չկայ: Օտմ. Մահմանդը թեան հուշակման օրերէն ի վեր մեր ազգին ամէնէն ցաւալի խեղճութիւններէն մէկն եղած է կարգ մը հրապարակագիրներու կողմէ չարաչար գործածութիւնը ազատութեան որուն համար այնքան անմեղ արիւններ թափուեցան: Հետեւեալ նամակը գործողութեան է Օտման մօտ կէս դար առաջ Տ. Նիքիտէսի եպիսկոպոսի, կը պարզէ ճիշտ այսօրուան վիճակը: Կարծես մեծ վտաւանդին ուղջ է դեռ, ու կը գծէ այժմու յանդուգն, անպատկառ գրիչներու շահաւակութիւնները: Միեւնոյն ատեն հոյակապ ներքող մ'է լաւ իմացուած ազատ մտածութեան, որ կաշկանդում չի ճանչնար բնաւ, եւ բարեբար դեր ունենալու համար անհրաժեշտ պէտք ունի անկաշկանդ թռիչքի:—

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Գերապատիւ Սրբազան Հայր,

Ձեր Սրբազնութեան ինծի ներկայացուցած խորհրդածութեանցը վրայ խորհեցայ ես ալ իմ կողմէս:

Ձեր նշանակած վեասը շատ իսկ իրական և զգալի վեաս մըն է. և ես ինչպէս նաեւ որոշ հետ մի եմք սկզբունքով, հաւասարակէս կը դատապարտենք Ձեզի հետ մեր մէկ քանի գրիչներու ընթացքը: Ես այդ գրողներուն այնքան ծանր թշնամի եմ,

որչափ աւելի բարեկամ եմ տպագրական ազատութեան. վասն զի այն ազատութեան իսկ ռիսկիւմ թշնամիները ոչ թէ անոնք են որ ամէն օր անոր դէմ կ'ազաւակեն, այլ անոնք են որ այն ազատութիւնը չարաչար կը գործածեն: Գրել չգիտցող գրիչներ, գրականութեան պաշտօնականներ, որ այս ասպարէզին համար ծնած չեն, և որոնք տառնց քերականութիւն գիտնալու օրագիր խմբագրելու ելեր են... Մեր ազգին խեղճութիւններուն վրայ շատ կը գրին և շատ կ'ողբան. արդեօք այն խեղճութիւններուն մէկն ալ այն չէ որ ազգին օրագրութիւնը ըստ մեծի մասին իրենց ձեռքն է մնացիր:

Բայց ինչ որ Ձեր Սրբազնութիւնը ամէն բանէ աւելի կ'ողբայ, և իրաւամբ, այդ գրիչներուն ումանց ըրած յանդուգն ասպատակութիւններն են բարոյական կարգին մէջ: Չմիայն բան մը որ հասարակաց յարգանքն ու ակնածութեանը ենթակայ ըլլայ, չմիայն բան մը որ սրբազան ըլլայ հանրութեան համար. և զայն այդ անպատկառ գրիչներն իրենց յախուռն յարձակմանց ենթակայ չընեն:

Անհատական պատիւ, ազգային և ընտանեկան պատկառանք, ամենէն ազնուա-

կան զգացումները, ինչպէս նաեւ ամենէն վսեմ ոկզմունքները առաթուր կոխտեցին, ամէն տեղ տարածեցին սրբապիղծ ձեռքերնին. և իրենց ամբարտաւանութեան ալիքը ելաւ ողողեց նաեւ եկեղեցւոյն բեմն և հասարակաց երկրպագելի սուրբ սեղանը:

Եւ վերջապէս իրենցմէ մէկը, ամէն տեսակ պղծութեանց մէջ իր գրիչը թաթխելէն հետքը, Ռեմոնի գիրքը թարգմանելու ելաւ, Ռեմոն, զոր այսօր ո՛չ ոք կը կարդայ Եւրոպայի մէջ:

Այս է աղէտալի արդիւնքը զոր ձեռք Սրբազնութիւնը կը նշանակէր ինծի անցած օր և որոյ դարմանը կը փնտռէր:

Եւ այս արդիւնքը տեսնելով, ահաբեկեալ կը հարցնէ ժողովուրդն ալ ձեզի հետ թէ «Ո՛ւր պիտի երթանք տաճարով»: և մտքով տկարագոյնները կը գայթակղին ու կ'ըսեն իրարու. «Ահա ո՛ւր բերաւ հասուց մեզ տպագրական աղատութեան դրութիւնը»:

Ասկէ մէկ երկու տարի առաջ մէկ քանի բանասէրք. նոր միտքերով զգածեալ և յառաջդիմութեան բարեկրօն, ազգային լեզուին խառն վիճակը կանոնաւորելու նպատակաւ, գրական յեղաշրջուած խորհուրդ մը յղացան, և զանի իւրոյս ընծայեցին «Ուղղագրութիւն» անունով: Այն ատեն ես ալ, եթէ ոչ տաղանդով և հմտութիւնով, որ երբեք իմ բաժինս չէ, գէթ քաջալերութեամբ և աշխատութեամբ գործակից գրտնուեցայ. քիչ մը ետքը իբրեւ գործադրութիւն ուղղագրութեան և առաջին փորձ մը կանոնաց, «Տարեյոյց» անունով նոր գիրք մը երևան ելաւ, որուն բնաւ մասնակցութիւն չունենայ:

Այս երկու գործերն ալ այն ատեն և մինչև այսօր շատ և զանազան դատաքննութեանց ենթակայ եղած են և բնականաբար պիտի ըլլային, ինչպէս ամենայն նոր բան. բայց այս ամենուն յայտնի է և տարակոյսի ստուերն անգամ չկրնար ըլլալ թէ՛ միմիայն գրական նպատակ մը ունենալով, կրօնքի կամ բարոյականի կամ քաղաքականութեան հետ բնաւ յարաբերութիւն մը չունէին և չէին կրնար ունենալ: Ուստի, ամէն օրէնքի առջև անմեղ էին

այդ գրքերը և, եթէ կրօնախոյզ ատեա-նին առջև ալ ելլէին, անմեղ պիտի արձակուէին. և սակայն, այն ատեն, կրօնական դասը, իրեն գլուխ ունենալով մէկ քանի եպիսկոպոսունք, և մէկ քանի ալ աշխարհական եպիսկոպոսներ, խռովեցան, իրար անցան և, յանուն կրօնի, գրական խնդրոյն մէջ նետուեցան. և գի՛րքն ալ, հեղինակն ալ, կարգացողն ալ, ամէնը մէկէն բանադրելու ելան: Ուղղագրութիւնը իբրեւ հերետիկոսութիւն պիտի պատժուէր, և քիչ մնաց որ գիրքը տպող տպարանը գոցուէր և տպագրիչը բանտարկուէր:

Անոնք որ այս միջոցը գործադրելու ելան, իրենց դրութեան առջև իրաւունք ունէին. վասնզի, Սրբազան հայր, այս խնդիրը ուսանելու և լուծելու համար, շատ մը յոգնելէն հետքը և մեծամեծ հեղինակներու և քաղաքագէտներու կարծիքները հետազօտելէն ետքը, լաւ համոզուած եմ որ տպագրական խնդրոյ մէջ երկու ճամբայ կայ. այսինքն երկու ծայր. կա՛մ լնդհա-նուր արգելք, կա՛մ բացարձակ ազատութիւն. կա՛մ պէտք է մարդկային մտածութիւնը խորհրդատեսորին մէջ ամբողջա-կել և անկէ անդին անցնելու արգելք դնել, այսինքն ոչնչացնել մտածութեան պաշտօնը, կա՛մ, եթէ ունի, հարկաւոր կը դատուի անհատին և ընկերակցին բարոյական շահե-րուն նկատմամբ, եթէ նորանոր գիւտք, ճշմարտութիւնք և դրութիւնք, որ մարդկային բարեկեցութեան և յառաջդիմութեան կը նպաստեն, կ'սպասուին անկէ, պէտք է որ այն մտածութիւնը, որչափ կարելի է, ազատ ըլլայ իր յղանալու և արտաբերելու գործողութեանը մէջ. եթէ ամենափոքր ճնշում մը գործածեցիր վրան, եթէ ըստ կամաց կամ ըստ հարկի ո՛ր և է ուղղութիւն մը տուիր դրան այն մտածութեան, ո՛ր և է սահման մը գծեցիր իր ընթացքին, խանգարեցիր զանի իր էութեանը մէջ. ազատութիւնը բաւանդով անկէ բարձիւր նաեւ այն յատկութիւնը որով միայն ին-դունելի և յարգելի է անի, անկեղծու-թիւնը:

Օգուտ չկայ ասկէ ընկերութեան համար, օգուտ չկայ միայն այն կարողութեան հա-

մար, որ բռնացաւ անոր վրայ կամ ներգործեց իր սղգեցութեամբը. այն ատեն ահա միոյն կամ սակաւին կամքը և մտածութիւնը միանեծան կը թաղաւորէ, և մոլորութիւնը, նաև ճշմարտութիւնը առանց քննութեան ընդունելի կ'ըլլան մարդկային ընկերութեան մէջ, և երկուքն ալ միեւնոյն երկուսնաց ենթակայ: Ինծի համար նաեւ աւելի մեծ վնաս մը և աւելի աղէտալի արդիւնք մը չկրնար ըլլալ. ահա ասոր համար կ'ըսեմ թէ կա՛մ բոլորովին արգիլելու է մտածութիւնը, կա՛մ բոլորովին ազատ թողելու է:

Գ. ՕՏԵԱՆ

ԱԶԳԻՆ ՁԱՅՆԸ

Տաճարի թիւ 10ին մէջ Խմբագրապետ Արթ. Տ. Զարմայր Քհնյ. կ'անդրադառնայ այնպիսի կենսական խնդրի մը, որ ամէն Հայու սիրտին կը խօսի, և ազգին իւրաքանչիւր անհատը պէտք է հետաքրքրուի անով: Ազգին երկու անջատ հատուածներուն մայր Եկեղեցիի հետ միացման խնդիրն է այն, զոր ամէն Հայ մօտ ապագայի մէջ յայրմարապէս վերջացած տեսնել կը բաղձայ անձկապին: Բայց պարզ բաղձանքն ու համակրական ցոյցեր չեն որ պիտի կրնան ի գլուխ հանել այսպիսի շատ կարեւոր խնդիր մը, ու լուծել զայն Հայութեան համար նպաստաւոր ուղայմաններով և քրիստոնէական աւելի լայնամիտ հիմերու վրայ: Այս գովելի բաղձանքը՝ յայտնուած շատ մը ճշմարտապէս կրօնասէր ու ազգին շահը խորհող Հայ անհատներու կողմէ, ուրիշ բան չէ եթէ ոչ «Ազգին Ձայնը», զոր լռեցնել ու խեղդել փորձեց բռնապետութեան երկաթեայ թաթը: Բայց ան հիմա ա՛լ աւելի կը թնդայ մեր ականջներուն, և մեզ, ամէնս դէպի պարտականութեան ու գործունէութեան աստարեզր կը հրաւիրէ:

Համիտեան թէժի մի օրով այս տեսակ խնդիրներու վրայ խորհիլ, խօսիլ ու գրիլ

մահացու մեղք մըն էր. որովհետեւ ան որ Հայութիւնը բնաջինջ ընկու դժոխային ծրագիր մը կը դարձնէր: Բնականաբար այսօրինակ գորացնող, կեդրոնացնող ու վերականգնացնող շարժումի մը արգելք պիտի ըլլար: Բայց Աստուծոյ անհուն գթութիւնով ու հայրենիքին ազատասէր որդիներուն արիւնով ծագեցաւ Օսմ. Սահմանադրութեան արիւր, ու շատ մը ժողովուրդներու հետ, մենք Հայերս ալ գերութեան ու կաշկանդումի անարեւ զընդաններու կմախացած կալանաւորներուն պէս լոյս աշխտրհ ելանք, իրարու երես նայեցանք, և տեսանք ու զգացինք թէ քայքայումի և կործանումի անդունդին եզրն ենք հասած: Անցան Սահմանադրութեան նախօրեակի խանդավառութեան օրերը, գործի ու գործունէութեան շրջանը սկսաւ ամէն ժողովուրդի համար. բայց մենք Հայերս ազգայնութեան մէջ ի՞նչ նոր քայլ առինք: Կ'ընդունիմ թէ Կիլիկեան Արհաւիրքը ո՛րչափ մեծ վէրք մը բացաւ Հայութեան արդէն արեւոտող սիրտին վրայ. բայց ահա այդ իսկ է բուն պատճառը որ պէտք է ստիպէ մեզ խորհիլ ազգին ապագային վրայ, ու պատրաստ գտնուիլ ամէն անակնկալի առջեւ: Ահա ասոր համար ազգային միութեան ներքին կապերը, բարոյական ոյժերն և կրօնական անխախտ սկզբունքները պէտք է ամրացնել ու ի հանդէս բերել, և շինել բուն ազգին ոգին. մէկ խօսքով պէտք է լսել ազգին այս անլուրի ձայնը, — Միութեան, սիրոյ ու համերաշխութեան ձայնը:

Բայց ես անձնապէս հաւատացող մը չեմ թէ այսպիսի միութիւն մը մէկ օրէն միւսը պիտի կրնայ գոյութիւն առնել, ու քանի մը տարիներու ընթացքին ամէն բաժանում ու պառակտում պիտի կրնայ վերնալ մէջտեղէն: Այդ ո՛չ բնական է, ո՛չ ալ բանաւոր: Բնութիւնն ասոր օրինակները կը ցուցնէ մեզի: Պտուղ մը մէկ օրուան մէջ չի հասնիր, այլ ժամանակի ընթացքին մէջ աստիճան առ աստիճան: Նմանապէս մարդիկ ալ գաղափարի հասունութեան, լայնամտութեան ու բարձր կեանքի մէկ օրէն միւսը չեն հասնիր: Ազ-

գեր ու յորանուանութիւններ ալ աստի-
ճանաբար կը դարգանան ամէն բարի բա-
նիրու մէջ։ Հետեւաբար այս բաղձալի
միութիւնն ալ ժամանակի պէտք ունի, որ
իրերուն բնական ընթացքին մէջ հասնի
բաղձացուած նշանակէտին։

Միեւնոյն ատեն մոռնալու չենք թէ
ներկայ սերունդը մեծ պատասխանատու-
ութիւն ու նուիրական կոչում մը ունի։
Մե՛նք պիտի պատրաստենք գետինը այդ
միութեան չէնքին։ մե՛նք պիտի ծրագրենք
զայն, ու յաջորդ սերունդներ պիտի չի-
նեն։ Ըսել կ'ըլլայ թէ այն պիտի ըլլայ
ինչպէս որ մենք կը ծրագրենք որ ըլլայ։
Ուրեմն, կը հարցնեմ, ի՞նչ կ'ընենք այս մեծ
գործին, ազգին սպագային համար։

Ես խոնարհաբար պիտի առաջարկէի
քանի մը միջոցներ, յուսալով որ այս
խնդրին մէջ իր պարտականութեան ճշմար-
տապէս գիտակ ամէն հոյ, թէ՛ կղերական,
թէ՛ աշխարհական, պիտի ուզէ լրջօրէն
խորհիլ անոր վրայ ու կատարել իրեն ին-
կած բաժինը։

Նախ՝ պէտք է մեր Լուս., Բող., Հոռոմ.
Եկեղեցիները մշակեն քրիստոնէական նե-
րողամտութիւն, փոխադարձ ազնիւ զիջո-
ղութիւն և գիտակից լայնամտութիւն։ Ա՛լ
կարծեմ շատ ուշ է այս ու այն Եկեղեցիին
փրկութիւնը իր պատերուն մէջ ամրափա-
կել, ու կորստեան դատապարտել ամէն
անոնք որ իրեն պէս չեն խորհիր ու իր ձե-
ւերուն տառապէս չեն հետեւիր։ Ա՛լ Քրիս-
տոնեայ Եկեղեցին անցած է այդ տառա-
կանութեան չըջանէն։ ոգիի, սկզբունքի
դարն է այս։ Բանունք աչքերնիս և տես-
նենք թէ Ամերիկայի Բողոքական յարան-
ուանութիւններուն, այդ ազատախոհու-
թեան ընդարձակ սահմաններուն մէջ իրենց
ուզած ուղղութեան գացող Եկեղեցիներուն
մէջ իսկ զգալի դարձած է պէտքը միա-
նալու, համարաշխաբար գործելու։ Երբ
Քրիստոնէութեան չափ դարուն և ժամա-
նակին ոգիին ճշմարտապէս յարմարող և
ներդաշնակուող կրօնք մը չկայ պշխաբհիս
մէջ, ինչպէ՞ս Պրըլլայ որ մենք զայն չենք
կրնար յարմարցնել մեր միջավայրին, ու
ներողամտօրէն ներդաշնակել ազգային յա-

րանուանութիւններուն միջեւ։ Պէտք է
գիտակցօրէն ցուցուած լայնամտութիւնով
յարգենք գաղափարի ազատութիւնը մեր
համազգի եղբայրներուն։

Երկրորդ՝ պէտք է կղերականութիւնն
անկեղծօրէն դէպի այս նպատակը դիմէ ու
քաջալերէ զայն անշահարկօրէն։ Պէտք
է ցաւով խոստովանինք թէ կղերը մեծ դեր
ունեցած է յարանուանութիւններուն և
մայրենի Եկեղեցիին միջեւ խտրութեան
պատուարը աւելի անառիկ դարձնելու ան-
մտութեան մէջ։ Ամենքս ալ գիտենք թէ
տգիտութիւնը, չահամոլութիւնը և յաճախ
դասակարգի առանձնաշնորհումներու նա-
խանձարկողութիւնը քիչ բաժին չեն ու-
նեցած այս ցաւալի անջատումը սեւակա-
նայնելու մէջ։ Ձէ՛, ա՛լ Հայ կղերը՝ ի՞նչ
փակեղի կամ վերարկուի տակ ալ ըլլայ
արտաքնապէս՝ պէտք է գիտնայ թէ Հայ
կղեր է, ազգին համար գործելու պարտա-
կան, ազգին համար մեռնելու պարտա-
տ։ Հանդիսաւոր ու տօնական առիթներու
սպասելու չէ այցելութեան, փոխադարձ
խորհրդակցութեան, աջակցութեան հա-
մար։ այլ պէտք է միշտ հօտ և հովիւ
քրիստոնէական սիրով իրարու օգտին հա-
մար աշխատին։ ու փոխադարձ վստահու-
թիւն ներշնչեն իրարու, որ կրնայ բխիչ
միայն ճշմարիտ կրօնասիրութենէ ու ազ-
գասիրութենէ։

Երրորդ՝ վարժարաններու մէջ կրօն.
կրթութիւնն աւելի գործնական ու ոչ-յա-
րանուանական ոգիով պէտք է տալ։ Խոս-
տովանինք թէ մեր վարժարաններուն մէջ
կրօն. կրթութիւն չկայ. եղածն ալ խոր-
հող, արամաբանող մարդու մը միայն ու
սիրտին անբաւականէ։ Հայ մանուկին դէպի
իր պատկանած Եկեղեցին կոյր սէր մը
ներշնչելով չէ՛ որ զայն կրօնքի մարդ մը
պիտի կրնանք ընել. գոց եղած քանի մը
աղօթքներէ և բարեպաշտական ձեւերէ
քաղկացեալ կրօն. կրթութիւն մը դադար-
ափայնելու իրար խաչատող հոսանքներուն
մեջ։ Եւ չի կրնար դիմանալ։ Վարժարաններու
մէջ կրօնքի, խիղճի մարդը պատրաստենք,
ու գօտեպնդենք զայն գիտութեան լոյսով.
այն ատեն Հայ և Քրիստոնէայ սերունդ մը

պիտի ունենանք: Ինչո՞ւ մեր իբր թէ վարգացեալ երիտասարդներէն չատեր յեղափոխականներու միջոցով Եւրոպայէն բերուած քանի մը չմարտուած վարդապետութիւններէ մինչեւ անկրօնութեան քշուեցան զացին. որովհետեւ կրօնական հիմնական կրթութիւն մը չէին սուած վարժարաններու մէջ:

Չորրորդ՝ պէտք է ազգային ու ընտանեկան տօներ ու սովորոյթներ ազգին այս երեք հաստեածներուն մէջ նոյն յարդն ու պատիւը վայելեն, ինչպէս նաեւ ուղղային առանդութիւններ՝ մերկացուած իրենց շեռասկար ու անյարմար կեղեանքէն՝ մաս կազմին մեր ազգային կեանքին: Զատիկ, Ծնունդ, Վարդանանց եւ այլն, պէտք է բոլորին ալ սիրելի և յարգելի լլլան: Պէտք է ազգին այս երեք հաստեածներուն մէջ ալ կրթութիւնով, լրագրութիւնով և հրապարակախօսութիւններով կրթել ժողովուրդը, ու հայ ընել զայն սիրտով ու հոգիով. պէտք է կարելի եղածին չափ սորվեցնել անոր իր ազգ. պատմութիւնը, սիրոյնի իր լեզուն և հասկոյնել թէ իբրեւ Հայ, և ալ աւելի իբրեւ Քրիստոնեայ Հայ պիտի կրնայ ինք իր ազգային գոյութիւնը պահել Սահմանադրական Թուրքիոյ մէջ:

Հայուն համար միութեան հարցը կենսական հարց մըն է աւելի քան երբեք: Ահա՛ այս է ազգին ձայնը, ազգին պահանջը: Մտիկ ընենք զայն, եղբայրներ: Միասին անցանք հին, հին դարերու մէջէն, միասին թափառեցանք հայրենիքէ հայրենիք, միասին կրեցինք բռնութեան անտանելի լուծը, միասին անցանք Արիւնի Կարմիր Ծովէն, միասին հասանք Սահմանադրութեան արեւին արշալոյսին, միասին կը անուշանկէն նաեւ այն յոյժ թէ՛ այս Սոմ. հայրենիքին մէջ պիտի վայելենք սահմանադրական երկրի մը բոլոր իրաւունքներն ու տպահովութիւնները, ուրեմն ինչո՞ւ նաեւ միասին չաշխատինք մեզի համար այսքան թանկագին Քրիստոնէութեան պահպանումին, ինչպէս նաեւ պայծառացումին այն ազգային եկեղեցիին, որ մեր Սրբազան Նախնիքներէն մեզի ձեռնուած միակ աւանդն է: Ա՛խ, երբ պիտի

զայն այն օրը, երբ այս ստաւապեալ նոր Իսրայէլին մնացորդը պիտի միանայ կրթութիւնով, եկեղեցիով, պիտի միանայ սիրով ու համերաշխութիւնով ու ազգաշէն գործակցութիւնով, և ե՛րբ պիտի լսենք «սէ՛ր, միութիւն, եղբայրութիւն» աղերսող, աւետարանող Ազգին ձայնը: (*)

Բերա

ԳՐ. Զ. ԳԱԼՈՒՍԵԱՆ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Հ Ա Յ Ջ Ա Յ Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

(Շարունակութիւն 10րդ թիւէն)

Իւթիւճեան Աւետարանական Եկեղեցիին հովուութիւնը շարունակելով հանդերձ, չա՛տ պաղ կը գտնէր Ամերիկացիներէն մուտ գտած անհամ եղանակները, որոնք սովորաբար կ'երգուէին ժողովարաններու մէջ. ինքը առած ըլլալով արեւելեան երաժշտութեան ճաշակը, մերթ ընդ մերթ կը վիճաբանէր միսիօնարաց հետ՝ առարկելով թէ ինչ հարկ կար այդ անճաշակ Արեւմտեան եղանակներով երգել, մինչ մինք խիստ լուսագոյներն ունինք:

Մը. Համլին տեսնելով Պատուելի Իւթիւճեանի երաժշտութեան մէջ ունեցած յաջողակութիւնը, այդ ճիւղին դասախօս կարգեց զինքը՝ Պէպէքի Բարձրագոյն վարժարանին մէջ, ուր տարի մը չափ պաշտօնավարեց: Այդ միջոցին էր որ հեղինակեց «Պանծասցի այսօր» և «Զարթիր հոգիս» երգերը, որոնք խիստ լաւ ընդունութիւն գտան Պօլսահայ երիտասարդութենէն:

Կը պատմեն թէ օր մը Լանկայի Այազմա փողոցը Բողոքական մը մեռած ըլլալով, երբ ինքն ալ իբր երէց՝ պաշտօնին բերմամբ դադարողին առջեւէն կ'երթար, այդ բազմամարդ հրապարակին մէջ խռնուած հոծ ժողովուրդներէն մոլեւանող Հայ երիտասարդ

(*) Այս չափեկան զրուծեան առթիւ տեսնել խմբագրութեանսկարծիքը Ցախարի ներկայ թիւին «Ազգային Կեանք»ի բաժնին մէջ:

մը՝ գետնէն խոշոր քար մ'առնելով կը նետէ պատուելին, որուն ճիշդ ճակտին գալով, խեղճ երիտասարդը կը դանդաժէ ու կ'իյնայ ցաւին սաստկութենէն անզգայացած. և որովհետեւ խիստ փափկակալում էր, ութ օրէն կը մնունի, տակաւին 30 տարեկան հասակը չլրացուցած, 1847ին:

Արքայապետ մահուանէն երկու տարի առաջ ամուսնացած էր Զանազան անուամբ օրիորդի մը հետ, որմէ միայն որդի մը ունեցաւ Արմենակ անուն, որ ծաղիկ հասակին մէջ մեռաւ, 18 տարեկան:

* * * Թամպուրի Ալիքսան ծնած է 1815ին Կէտիկ-փաշա. սորա հայրը՝ որ Վանքի Դասպար կ'ըսուէր, սննկապետն էր Պոստոյ խաներէն մէկուն և կը բնակէր Սէրայ-իչի կողուած թաղը: Իրաւ է թէ սա՝ ալ Համբարձումի աշակերտեց իր երկու ընկերակիցներուն հետ, բայց եկեղեցական երգեցողութեանց փափաք չունենալով՝ բողոքովին քաղաքական ճիւղին յարեցաւ, թամպուրի հետեւելով իր վարպետին պէս:

Ալիքսանի դուրսի զուարճութիւններէն համ չառնելով՝ լիովին առանձնական կեանքի դատապարտած էր ինքզինքը. ուստի փոխանակ նուագածուաց խումբերու հետ միանալու, բաւականացաւ միայն իր երկու քոյրերուն՝ Մարինոսի և Կատարինէի նուագ և Արեւ. երաժշտութիւն սորվեցնելով, որոնց հետ ընկերանալով լաւ խումբ մը կազմակերպած էր իր ընտանեկան յարկին մէջ:

Ալիքսանի նւթականի մասին անհոգ ըլլալով, պէտք չունէր իր օրական պարէնն հայթայթել՝ արհեստին միջոցաւ. բայց երբ Հօճա Փաշայի մեծ հրդեհէն այրեցաւ իրենց տնակը, (որոյ միջոցին այրեցաւ եղած էր նաև Դումաքարու Մայր եկեղեցին), ստիպուեցան ամբողջ ընտանեօք պատապարտուիլ իրենց տան գետնաշարի նկուղին մէջ՝ որ աղատ մնացած էր հրդեհին լափիչ բոցերէն: Ահա այն ատեն էր որ Ալիքսանի հարկադրուեցաւ դատախօսութեան սկսիլ Սկիւտար՝ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, և քիչ մը ատեն վարել այդ թողի երաժշտութեան պաշտօնը:

Մինչդեռ Ալիքսան կ'աշխատէր Սկիւտարի մէջ փայլեցնել իր տաղանդը, միեւնոյն միջոցին իր ընկերակիցներէն Արքայապետ Իւթիւճեան անուանի կը հանդիսանար Խաչիւղի մէջ և Արիստակէս Յովհաննէս սեան Պատրիարքանիտ եկեղեցւոյ մէջ. սակայն ինչպէս ըսինք, Ալիքսան փափաք չունենալով այդ ճիւղը մշակելու, քիչ ատեն միայն պաշտօնավարեց Ս. Խաչի եկեղեցին և նորէն իր նկուղը դարձաւ:

Ալիքսան փառասիրութիւն չունենալով՝ թէև հետամուտ չէր ըլլար ցոյց տալ ինքզինքը, սակայն թամպուր նուագելու մէջ իրեն նմանը չունենալով, ամէն տեղէ կը հրաւիրէին զինքը՝ լսելու համար այդ արուեստին մէջ ունեցած արտաքոյ կարգի ճարտարութիւնը: Ուրբաթ և Կիրակի օրեր ընդհանրապէս կը նուագէր Սիւլէյման փաշա խանի զբօսարանը և ուրիշ օրեր նուագի դասեր տալով կը զբաղէր:

Բնական է որ այսքան յատկութիւններով օժտեալ մասնագէտ մը ծածուկ չէր կրնար մնալ Պոստոյ մէկ խորշը, որքան ալ անիոյթ գտնուէր հասարակութեան հանդէպ. ուստի 1854ին Եգիպտոսի Խտիվ Սալիտ փաշա՝ որ տակաւին նոր յաջորդած էր Ապպա փաշայի, փափաքելով իմանալ այս անհման վարպետին թամպուրը, 40 անգլ. ոսկի ամսական վարձք խոստացաւ Ալիքսանի, որպէս զի միայն իրեն ծառայէ. այս տեսակ բախտաւորութիւն մը չէր կրնար մերժուիլ, հետեւաբար կէս մը իր ուղեւորը, և կէս մըն ալ իր բարեկամաց թախանձանօք վերջապէս որոշում տուաւ մեկնելու:

Հինգ տարի շարունակ մնաց այդ պաշտօնին մէջ և լիուրի վարձատրուեցաւ Բարձր. Խտիվէն՝ ամէն կերպ հողածութիւն տեսնելով անկէ, բայց իր տարօրինակ բնաւորութեամբ չուզեց այդ ճոխ կեանքը շարունակել մինչև վերջը, ուստի բոլոր վաստակը հոն սպառելէ յետոյ՝ 1859ին վերադարձաւ նորէն Պոլիս, ուր խեղճութեամբ հինգ տարի և 5 ապրիլով մեռաւ 1864ին:

Որչափ կը յիշենք, հանգուցեալը հեղինակած է 10ի չափ շարքինքը՝ Սուգիսիլ,

Կինիւֆր, Պայքար, և Աճեմ բռնակիւք եղա-
նակներով: Ասոր մահուանէն ետք, քոյրը
ծախեց թամպուրի Ալիքսանի բոլոր ձայնա-
գրած եղանակները՝ Տպագրիչ Յովհաննէս
Միւհէնտիսեանի, որու վրայ պիտի խօսինք:

* Մեր տպագրութեան Կիւթէնպէրկը
համարուող Յովհաննէս Միւհէնտիսեան
ծնած է 1810ին. որդին էր չափազանց և
տօմարագէտ Գէորգ Միւհէնտիսեանի, որ
ուսումնասէր անձ մը ըլլալով, ջանք չիւր-
նայեց իր զաւկին պէտք եղած կրթութիւնը
տալու համար: Յովհաննէս ամէն կերպով
արդարացուց հօրը նպատակը, ետեւորեալ
աշխատելով իրեն աւանդուած դասերը հիմ-
նով ըմբռնելու:

Թէեւ սա ալ իր ընկերակիցներուն պէս
աշակերտած է Պապա Համբարձումի, սա-
կայն միւսներուն չափ կոչում չունենալով
այս գեղարուեստի ձայնական մասին, չկըր-
ցաւ ձայնագէտ մը ըլլալ. բայց ընդհակա-
ռակն՝ դործնական մասին մէջ շատ աւելի
արդիւնքներ ցոյց տուաւ քան միւս ըն-
կերները, վասն զի ո՛րքան որ ձայնագրու-
թեան գիւտը եղած էր, դժբախտաբար
անկատար կը մնար առ ի չգոյէ տպեալ
ձայնանիշերու. անա՛ այս գործին զերին
մէջ էր որ Յովհաննէս մեծ բաժին մը ու-
նեցաւ երկար ատեններ զոհելով՝ Շորա-
կանաց խաղերն որոշ կերպով ձուլելու ի
պէտս ուսանողաց, յորում կատարելապէս
յո՞ղոցեալ՝ իր անխնայ աշխատութեամբ
հետզհետէ լաւագոյններն արտադրելով:

Միւհէնտիսեան՝ բոլոր Հայ ձայնագրու-
թեան հակակիր գտնուողներուն դէմ հզօր
ջատագով մը ելաւ, թուելով այդ գե-
ղարուեստին քաղմաղիմի օգուտներն ու
չափազանց յարմարութիւնը, որ մի՛միայն
կրնար գոհացում առա՛ Շարականաց եր-
գեցողութիւնները ճշգրիտ կերպով ձայնա-
գրելու, քանի որ, կ'ըսէր, ո՛չ Յունականի
և ո՛չ եւրոպականի միջոցաւ կրնան մեր
եկեղեց. եղանակները խիստ կանխ յար և
նման ձայնագրութիւնը (*): «Ուստի փոխանակ

այդ նորագիւտ արուեստին դէմ մաքառե-
լու, պէտքէ բուն կերպով պաշտպանէք
զայն՝ ի փառս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ»:

Սոյն պայքարները մղած ատեն բոլորու-
վին առանձին չէր մնացած Միւհէնտիսեան,
այլ իրեն զօրաւոր աջակից ունեցաւ նաեւ
Արիստակէս Յովհաննէսեանը՝ որ Պապա
Համբարձումի աշակերտներէն ամէնէն ա-
ռաջնակարգն ու մրակ հետեւողն եղած էր
իր մեծոնուն վարպետին. վասն զի Արիստ-
ղոմ շատ երիտասարդ հասակին մէջ միւսած
ըլլալով և Ալիքսան միայն քաղաքական
երաժշտութեան հետեւելով, առիթ չունե-
ցան իրենց վարպետին գիւտը՝ այն է Հայ-
կական ձայնագրութիւնը մշակելով աւելի ևս
կատարելագործելու. իսկ Յովհաննէս Միւ-
հէնտիսեան և Արիստակէս Յովհաննէսեան
ամենայն եռանդեամբ ինքզինքնին նուիրե-
ցին և ոգի ի բռին աշխատեցան այս գործն
ի կոտտար հասցնելու. հետեւաբար երկուքն
ալ ձեռք ձեռքի տուած՝ զօրավիդ եղան
Լիմօնեանի, որ այդ հակառակութիւնն-
րէն ձանձրացած՝ սկսած էր այլեւս բոլորու-
վին քաշուիլ ուսուցչութեան ասպարէզէն:

Պապա Համբարձում ատենելով որ իր
թշնամիները մէկ կողմանէ կը շատնան,
մինչդեռ իրեն աջ բազումն համարուող
պաշտպանները՝ Պարեան և Պէդճեան ամի-
րայք, ինչպէս նաեւ Տիւղիան Չէլչլիները
հետզհետէ իրենց մահուամբ անհետացած
էին, ուղեց քիչ մը ատեն ալ առեւտրական
գործոց ձեռնարկել. ուստի սկսաւ իր Նէյ-
զան Զննոր որդւոյն հետ վաճառականու-
թեամբ զբաղիլ:

Նախ և առաջ միջերանոց մը բացին,
Ղալաթիա, զանազան ապրանքներ դնելով
հոն. ապա Տրապզոնէն, Սամսոնէն, ըն-
դեղէն, ծխախոտ, իւղ, Պաթումէն ալ
կուպր բերել տալով՝ ըստ բաւականի կրցան
շահ մը գոյացնելով հայկալիք իրենց սպ-
րուսար, թէեւ երբեմն ալ մեծ վնասներու
կենթարկուէին՝ այդ արհեստին գործառ-
նութեանց անգիտակ ըլլալուն համար: Օր
մըն ալ լուր առին թէ իրենց հաշուոյն ըն-
դեղէն բեռցած և Տրապզոնէն ճամբայ ե-
լած նաւը Գ. Պոլսոյ բացերը ընկղմած էր՝
փոթորկալից օդին սաստկութեամբ չկարե-
նալով դիմադրել:

(*) Ասոր պատճառը շատ պարզ է. վասն զի
Թէեւ ընական ձայնի կիւթէններու մէջ մի և ն ֆա եւ
սի և ն տօ կէս ձայն չկայ ամբողջութեամբ, բայց
գոնէ քսառորդ ձայն մը (շուրի) կը պարունակէ
իր մէջ, որոյ պակասը խիստ զգալի կ'ըլլայ մեր
եկեղ. երգեցողութեան մէջ, մինչդեռ եւրոպա-
կանը ընտել չունի:

Այս դժբախտութիւնը վերջին հարուածն եղաւ Լիմօնճեանի կենաց, որ ուրիշ միջոց չունենալով ձեռքին մէջ՝ ստիպուեցաւ գոցել Ղալաթիոյ մթերանոցը. և որովհետեւ իր միւս զաւակներն օգուտ մը ունենալէ աւելի բեռ մը եղած էին հօրերնուն, (տե՛ս Ա. Գլուխ) պարտաւորուեցաւ վերստին դասախօսութեան դիմել:

Ճէզայիրեան արդէն խոստում մ'ըրած էր իրեն՝ որ շաբաթը մէկ-երկու անգամ այցելութեամբ Սասգիւղ դասեր տայ. ուստի տեսնելով որ բազմարդիւն ուսուցիչը ձեռնարկած վաճառականութեան մէջ բոլորովին փճացուցած էր ամբողջ հարստութիւնը, յիշեց այդ խոստումը, և Սասգիւղի մէջ տուն մը վարձելով՝ հոն փոխադրել տուաւ զՀամբարձում հանդերձ ընտանեօք (1834), մինչև ցմահ ամսական թոշակ մը յատկացնելով իրեն:

Այդ հանդարտիկ թաղին մէջ անցուցած է Պապա Համբարձում իւր կենաց վերջին տարիները, ուր գրած է նաեւ Տաճկ. լեզուաւ իր ինքնակենսագրութիւնը՝ որմէ մէկ քանի հատուածներ թարգմանաբար կը դնենք աստանօր:

«Այս երաժշտական արուեստին ձայնագրութիւնը թէև ես ինքս՝ տիրացու Համբարձում հարեցի Տիւղեանց Գուրուշէշմէի բնակարանին մէջ, բայց անկատար էր: Յակոբ չէլէպին լաւատեղեակ ըլլալով Եւր. երաժշտութեան, և անոր հօրեղբայրը՝ Անտոն չէլէպի քաջահմուտ Արևելեան նուագագործութեան, ես ալ Յունական Փսալթիքան գիտնալով, երեքս միասին ներկայ վիճակին հասուցինք այս գիւտը Աստուծոյ օգնութեամբ:

Դժբախտաբար Շարականոց այն հոգեղմայլ երգեցողութիւնները խաղալիք դարձած են մինչև ցարդ խել մի յաւակնոտ դպիրներու բերնին մէջ, որոնք կը կարծեն թէ Ներսէս Շնորհալիէն ուղղակի իրենց աւանդուած են այն եղանակները՝ զորս իրենց քմաց համաձայն կ'երգեն խիստ անպատշաճ կերպով, առանց նկատողութեան առնելու թէ մեր եկեղ. երաժշտութեանը իր պարզութեամբը վսեմ է և գեղեցիկ: Ուրեմն ի՞նչ հարկ կայ անոնց մէջ աւելորդ

գեղգեղանքներ մտցնել, և իրենց ձայնին գեղեցկութիւնը ցուցադրելու նպատակաւ՝ անվայելուչ ձեւերով նմանողութիւնը ընել այն ինչ երգիչին, գնչուին կամ Հրեային: Այս միջոցաւ ժողովուրդը փոխանակ ջերմեանդութեան հրաւիրելու, աւելի մեղապարտ կացուցած չինք ըլլար միթէ: (*)

Ահաւասիկ այսպիսի սանձարձակ կերպով կրգողներուն չափ մը դրած ըլլալու համար անհրաժեշտ համարեցինք շարակաւնաց հին խաղերու բեկորներով կազմակերպել արդի ձայնագրութիւնը, որ կարող է ամէն ազգի ձայնը գրելու, կարդալու և նուագելու. սակայն ցաւալի է որ միւր դպիր եղբայրներն այս արուեստին բազմաթիւ օգուտներն արհամարհելէ վատ՝ լիովին բնաջինջ ընել կ'աշխատին զայն, որպէս զի մի՞ գուցէ ատոր ծառայող աշակերտ մը՝ տեսարակ ի ձեռքին՝ ձայնագրեալ եղանակ մը երգելու յանդգնութիւնն ունենայ յատենի եկեղեցւոյ. խեղճերը չեն կարող ըմբռնել թէ այդ գեղարուեստին շնորհիւ տակէ հաղար տարի ետքն ալ միեւնոյն կերպով կրնան կարդացուիլ հիմակուան դրուածները՝ առանց կէտ մը չեղելու, մինչդեռ իրենք այսօրուան կարդացածին՝ վաղը տարբեր ասունքով կ'երգեն. արդ, ձեզի՛ կը թողում դատել՝ թէ ասոնցմէ ո՞րը նախընտրելի է:

Փա՛ռք Նախախնամութեան, մինչև այս եօթնամասուն տարիքս թէ՛ իմ Ազգիս և թէ՛ օտար ազգերու ծառայելով՝ կարող եղայ բաւական թուով աշակերտներ հասցնել. և եթէ քանի մը տարի ես Աստուած ինձ կեանք պարգեւէ, ամենամեծ բաղձանքս է, հաստատ հիմերու վրայ կուռուցանել այս նոր գիւտը, որպէսզի ժամանակներու ընթացքին մէջ չկորսուի, չանհետանայ և մոռացութեան անդունդին մէջ չգահավիժի այնքան երկարատեւ տշնութեամբ ձեռք բերած այս տկար մշտքիս արդիւնքը. ուրեմն կ'աղաչեմ, կը պաղատիմ ձեզի, սիրելի եղբայրներս, թողուցէք որ սրտի հանդարտութեամբ աշ-

(*) Յանդիմանութիւն մը որ խիստ լաւ կերպով կրնայ պատշաճիլ նաեւ արդի դպիրներէն ումանց:

խտարիմ սա յառաջացեալ տարիքիս մէջ զօրացնել այս գիւտը, որ տակաւին չատ պէտք ունի զարգացման. վասնզի այս ան- նըման գեղարուեստին գաղտնիքները ան- թիւ, անհամար են, և եթէ Աստուած ար- ժանի ընէ, պիտի ջանամ կարողութեանս ներսոյ չափով երեսան հանել զանոնք»:

Ահաւասիկ այս յուսալից ապագայի գեղեցիկ երազներով իր վերջին օրերն ան- ցուց չայ ձայնագրութեան բազմադիւն հեղինակը, և եթէ կասարեւապէս չկրցա- իր փափագին հոանիլ, գէթ անոր հիմնա- քարը դրաւ անյոգողող ձեռքերով, որ- պէսզի իրեն հետեւող աշակերտները գիւ- րութիւն ունենան այդ հիման վրայ կա- ուեցանիլ չէնքը:

Նշանաւոր օր մը աւանդեց իր հոգին Պապա Համբարձում, այն է՝ 1839 Յունիս 29ին, յորում մեռաւ նաև Սուլթան Մահ- մուտ Բ. մեծագոր արքայի Թուրքիոյ, որ Արեւելեան երաժշտութեան ըստ բաւականի հմուտ ըլլալով՝ քաջալերող մը եղած էր իր ժամանակի տաղանդաւոր երգիչներուն, և ինքն ալ քանի մը պէսթէներ հեղինակած էր, ինչպէս իր հօրեղբայրը՝ Սուլթան Սէլիմ երրորդ:

Անշուք կերպով կատարուեցաւ չայ ձայնագրութեան հիմնադրին Պապա Համ- քարձում Լիմօնճեանի յուզարկաւորութեան հանդէսը, և իր մարմինը ամփոփուեցաւ Բերայի Ս. Յակոբայ գերեզմանատան մէջ: Յաւալի է որ մինչև ցարդ քար մը իսկ գե- տեղուած չէ այսպիսի հուշակաւոր անձի մը վրայ, գոնէ գիտցուելու համար թէ ո՞ր կը հանգչի նա:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԶԵՅ. ՀԻՄՈՐԼԵԱՆ
(Շարունակելի)

ՍՐԲԱԶԱՆ ՆԵՐՇԵՆՁՈՒՄՆԵՐ. Գր. Հ. Գալուստեան. — Տօնական քերթուածներ, գնահատուած Ա.Ռն. Ս. Պատրիարք Հօր յառաջարան-նամակով: Գին 4 զրշ.:

ՊԱՏՃԱՌԸ, վիպակ. գրեց Արշակ Շահ- նուր. — Տպ. Տրապիզոն, գին 50 փր.:

ԽՂՃՄՏՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԸ

Մարմինին մահը չապրած բընաւին՝
Սիրեցի մեռնիչ կեանքը հոգիին.
Այդ մեռելութեան իսկ մեջն եր արդեն
Անմահութիւնն ի՛նքն, եղեւն երկնայէն.
Ան սահման չունեք, անհուն եր, անծի՛ր,
Որուն շատե՛ր կան որ չեն նախանձիր. . .
Չունեք եւ երկինք եւ ոչ իսկ գետին՝
Ուր չարանիւք սեւ օձեր սողոսկին.
Ինքն իր երկինքն եր, արեւը՝ կեդրոն,
Որ հաւաստ անուամբ կը յորցորցուի հոն:
Այդ փառ արեւին ջերմ շողերուն տակ
Բուրաստան մը կար ծաղիկաց ըսպիսակ:
Անկիւք՝ այդ հիւքեղ այդ ծաղիկներուն
Թագունին որքա՛ն, որքա՛ն եր սիրուն.
Լուսնի սխաւառակ մը կարծես անամպ՝
Այն աշտեփճեմունակ վարդ մ'եր խիղճ անուամբ
Որուն ըզզիսից հրապոյրներէն
Արեւցած՝ մոռցայ ցաւերս մարմնեղէն.
Երկիւղածութեամբ մ'ըզգոյ՞ հիացիլ՝
Կը դիտէի յար տեսն իր գեղեցիկ.
Ու ընթոյննունունին անոր շնորհներուն՝
Երջանիկ էի, զուարթ ու քրքումն:
Այսպէս՝ իր միակ սիրահարն եղայ,
Իր քովսններուն՝ հրամանին ծառայ,
Այնքան գրաւեայ, այնքան անձնուրաց
Որ բունն սարփանիմով օր մըն ալ յանկարծ
Յափշտակեցի զայն եւ խօսքաւ
Կուրծիս սեղանեցի, արքիս սիրամատ.
Այ՞՛ մեկէն՝ աւա՛ղ, խոց մը տակալի
Ցնցեց զիս, շացուց մահէ մ'աւելի. . .
Մշիկըս բացի՝ հոն տեսայ վերքեր,
Եւ դիտեցի որ արցունքս արիւն եր,
Բոյսած այդ վերքի ակերէն բազում՝
Որունց շատ անգամ, ո՛հ, չըլլար բուժում. . .

Եւդոկիա

ԱՐՏԱԻԱԶԴ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱՐՄԱՂԱՆ, գրեց Կ. Ա. Պարսաւեան.
— Գաւառի կեանքէ վէպիկներ, արձակ
քերթուածներ, նշմարումներ, ևն. : Տպ.
Վառնա, գին 7 զրշ.:

ՅՈՒՐՏ ԿԻԹԱՌ, գրեց Եւսա. — Կեդրո-
նատեղի Զարգարեան Գրատուն: Գին 1 զրշ.:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

«ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԱՐՑԸ»

Ազգային կեանքի մէջ ոչինչ կայ նոր: Ժողովներու և խորհուրդներու նիստերը, որչափ կը տեղեկացուի լրագրական հրատարակութիւններէ, հեռու են բեզուէն, մանաւանդ առեական արդիւնքներ ունենալէ: Ազգ. Ընդհանուր Ժողովը, որմէ ծնունդ կ'առնեն բոլոր միւսները, իր պարզած տեսարանով կը բարացուցէ միացեալները: Անցեալ ուրբաթ օր այս ստղերը գրողն առիթ ունեցաւ ունկնդրելու վիճաբանութեանց, որոնք չորս հինգ Ժամու երկար տեւողութիւն մը ունեցան: Այդ վիճաբանութիւնները դերազանցօրէն շահագրգռական ու կարեւոր պիտի նկատէր ունէ օտարազգի ունկնդիր, դատելով այն բուռն ոգեւորութիւնէն, որ կ'երեւար ժողովականներուն ստուար միծամանութեան քով: Հայերէնի անտեղեակ այդպիսի ուղիւն մը ապահովաբար պիտի ենթադրէր թէ Ժողովութիւնը գերագոյն ներկայացուցիչները՝ ազգին համար ամենակենսական խնդրոյ մը վրայ կը վիճէին: Հայ կեանքին համակիր եւ հետաքրքիր օտարազգի պիտի ըսէր ինքնիրեն թէ անշուշտ Մշտն եւ ուրիշները զաւառներու մէջ տիրող անապահովութեան, կամ գրաւուած հողերու վերադարձուելուն, կամ հայ վարժարաններու տրուելիք լուազոյն ուղղութեան մը, և կամ գուցէ Ատանայի դժբախտ դահերուն հասցուելիք օգնութեան, և վերջապէս ասոնց նման կենսական հարցեր կը քրքրուէին նոյն միջոցին, եւ այդ բուռն վիճաբանութենէն պիտի ծագէր կարեւոր լոյս մը՝ Հայ ազգին ապագան ու ճակատագիրը լուազոյն շուղի մը վրայ դնելու համար:

Բայց ո՞րքան պիտի սխալէր խեղճը:

Գերազանցօրէն խօսքի ու միայն խօսքի ազգ մը հանդիսացող հայ ժողովութիւնը հարազատ, հաւատարիմ ներկայացուցիչները՝ իրենց այնքան ոգեւորեալ վիճաբանութեանց նիւթ ունէին այլապէ՞ս չահեկան հարց մը, որ շատ աւելի կարեւոր էր ու կենսական՝ ներկայ ճգնաժամային կացու-

թեան մէջ: Խնդիրը կը կայանար գիտնալուն մէջ թէ Ազգ. Ժողովը իր նախորդ նիստին որոշումը՝ եկեղեցիները միթիւնիստութեան բանալու մասին՝ ճնշումի տակ առած էր թէ ոչ: Բարեբախտութիւնը հոն էր միայն որ Ժողովը ողջմտութիւնն ունեցած էր նիստին սկզբնաւորութեան իսկ փութալու վերջին օրակարգին առաջին խնդիրը, քուէներու ստուար միծամանութեամբ Ատենապետութեան կոչելով Վսեմ. Գարրիէլէֆ. Նորատուրեանը, պետական և ազգային կեանքի մէջ երկար տարիներու հոլովումով ստացած մեծ փորձառութեամբ ու բարձր տաղանդովը հայ կեանքին մէջ ճշմարիտ կարկառուն և ակնածելի դէմք մը հանդիսացող անձնաւորութիւնը, որ ազնուութիւնն ունեցաւ հրաժարականի խնդրով չզբաղեցնելու հայ երեսփոխանութիւնը, և անմիջապէս անցաւ գործի գլուխ՝ Ժողովականներու ջերմ ծախքերուն մէջ: Եւ սակայն Ն. Վսեմութեան բոլոր ճարտարութիւնն և ազգած ակնածանքն ու բաւական չեղան շուտով լուծելու կնճառու հանգույցը: Ամէն անգամ որ կոչում կ'ըլլուէր Ժողովականներուն՝ քուէարկութեամբ կտրուկ կերպով յայտնելու թէ իրենք նախորդ նստին մէջ ճնշումի տակ կարծիք յայտնած էին թէ լոյսարձակապէս կը պահէին իրենց կարծիքի ազատութիւնը, ահա ծայր կուտային խօսք ուղղութիւնը՝ ամէնքն ալ «օրինական» գիտողութիւններ ընելու համար: Տեսարք երեսփոխանք՝ Շահրիբեան, Վարդգէս, Մուրատ, Արամեանց, Վ. Բաբաղլեան և այլն՝ ճարտասաններ դարձած էին, համոզելու Ժողովականները՝ որ խնդիրն օրակարգ անցուի, անշուշտ «ուսումնասիրուելէ ետք»(?) կատարելու համար վիճաբանութիւններն եւ քուէարկութիւնը: Ամենէն չեղօք և նոյնիսկ հակիրճ ունկնդիրներն անգամ հիացան այն պարճախօսութեան վրայ զոր յիշուած երեսփոխանները ցուցուցին ներկայ խնդրոյն մէջ: Կիկերոն, Կամպէսթրա, Վալտէր Սուսօ, Ժօնէս, եւ ուրիշ համբաւաւոր արիւնքներ՝ առանց կատակի՝ կրնային շատ օգտիւ աշակերտիլ ասոնց, սորվելու հա-

մար խախտւոյ դատ մը տիպար պերճախօսութեամբ պաշտպանելու եղանակը: Անշուշտ իրաւունք չունինք քննադատելու զիրենք այդ ընթացքին համար: Իրենց երեսփոխանի, խօսողի պարտքն եւ իրաւունքն ի գործ կը դնէին այնքան ճարտարօրէն. խորհրդարանական կեանքի մէջ պակաս չեն այդ օրինակ խափանարար ցոյցեր, ստուար մեծամասնութեան մը դէմ փոքրամասնութեան կարծիքն եւ իրաւունքը պաշտպանելու համար. եւ ճիշտը խօսելով, մեծամասնութիւնը իր մէջ չստ քիչեր կը համարէր՝ հաւասար պերճախօսութեամբ եւ ուժգնութեամբ պաշտպանելու համար իր կարծիքը: Եւ սակայն այդ բոլոր եռանդն ու ճարտարութիւնը, տաղանդն ու պերճախօսութիւնը կ'արժէր որ գործածուէին լաւագոյն դասի մը ի նպաստ:

Անպայման կերպով կը հիմնանք ժողովին ստուար մեծամասնութեան ուղիւնութեան վրայ, որ գիտցաւ չազդուել ընդդիմադիրներու բոլոր ճարպիկ հնարքներէն, և գիտակից շարժումով մը միտքեց, Զնչեց «ժողովուրդ» անունով պիտակուած ոչխարանման խուժանի մը բիրերուն տակ տրուած որոշում մը, որ օրինաւորութեան ոչ մէկ պայման կը միացնէր իր վրայ. քայց նոյնքան մեծ է, ստուգիւ, մեր հիացումը կուսակցականներու կազմակերպուած ուժին և գործելակերպին վրայ, որով խախտու դատ մը իսկ ուժգնօրէն պաշտպանելու ջղուտ կորովը բերին ի յայտ: (*)

(*) Այս տողերը շարուած էին արդէն, երբ Բիւզանդիոնի մէջ կարդացինք Բրոֆ. Թումանեանի (Լոնտոնէն) շատ լուրջ մէկ յօդուածը: Ազգասէր Բրոֆէսէօրը արդար գնահատութիւն մը կ'ընէ կուսակցականներու կազմակերպելու ուժին եւ գործունէութեան, որով անոնք որոշ ծրագրով յամառաբար կը պայքարին իրենց զաղափարները տարածելու ժողովրդեան մէջ. մինչ ասոնց հակառակորդները խօսիլ, գրել ու բողոքել գիտեն միայն, առանց ունենալու որոշ ծրագիր եւ կազմակերպութիւն. «Երբ ազգային հանգամանք ունեցող ինդիւր մը — քաղաքական, կրօնական, դպրոցական — սեղանի վրայ է, Երեսփ. ժողովին թէ մամուլին մէջ, կուսակցականք գայն լաւ մը կ'ուսումնասիրեն իրենց նաշուոյն, իրենց հայեցակէտէն, եւ բռնելիք ընթացքին որոշելէ վերջը, հրահանգը կը տրուի վերէն վար, բոլոր կարգի-

կը մտածենք միայն որ անոնք՝ այդ կուսակցականները՝ ինչո՞ւ այս կարգի ճշդ-ճիւղ խնդիրներու մէջ կը ցուցադրեն իրենց ուժը: Ի՞նչ որ ալ ըսուի, վերջապէս երկրորդական խնդիր մըն է եկեղեցիներու մէջ միթիոնկ գումարելու պահանջը: Դիւրին էր — և է — իրենց համար տարբեր վայրերու մէջ ժողովուրդին պարզել իրենց աշխարհահայեացքը: Ազատութեան այս դարուն մէջ ոչ ոքի միտքէն կ'անցնի արգելք ըլլալ անոնց բրօքսկանտին: Անոնք ունին անշուշտ ընդունելի գաղափարներ ալ, և եթէ իրենց կարգ մը սկզբունքներն անհամաձայն են ժողովուրդին պէտքերուն և գիտակցօրէն ըմբռնուած շահերուն, նոյն իսկ այդ սկզբունքներուն ամէնէն բուն ընդդիմադիրներուն անգամ միտքէն չ'անցնիր արգելք ըլլալ ատոնց ծաւալումին: Թո՛ղ խօ-

րուն, ընկերներուն, հասարակ զինուորներուն, խմբագիրներուն, երեսփոխաններուն (եւ գուցէ սօփիստներուն ալ) եւ ամէն ոք իր պէրը կը կատարէ ամենայն կարգապահութեամբ: ... Ազգի թանակին մէջ ոչ մէկ պատրաստութիւն չի տեսնուիր, ինդիւր միասնաբար չուսումնասիրուիր, բռնուելիք ընթացքը, իւրաքանչիւրին կատարելիք դիրքը չորոշուիր. այլ իրենց զօրութեան վրայ, իրենց քէզին ճշմարտութեան վրայ, եւ քիչ մ'ալ բախտին վրայ վստահացած, իւրաքանչիւր ոք իր ուզածին եւ խորհածին համեմատ կը խօսի, կը գրէ, կը գործէ, երբեմն մինչեւ իսկ ի վնաս իրենց դատին: Եզրակացութիւնն ինքնին կուգայ. «Անհրաժեշտ է որ ամէն անոնք որ կուսակցականաց համալիր չեն, իրարու մօտենան, իրար հասկնան եւ համախմբուելով մէկ գործարանուոր մարմին մը կազմեն, միաժող գտնգուած մը ... որպէսզի համերաշխ գործունէութեամբ կազմակերպեալ կուսակցութիւն մը, կազմակերպեալ դիմադրութիւն հնար ըլլայ: Կարծելու չէ թէ այսպիսի կազմակերպութիւն մը հակառակութեան ոգիէ առաջ կուգայ. ոչ ալ արդի կուսակցութեան քով ուրիշ կուսակցութեան մը երեւան գալը ազգ. գործերուն վնաս կուտայ: Ընդհակառակն միայն մէկ կուսակցութեան ներկայութիւնն է վնասակարը, որ կացութեան միակ տէրը դառնալով կրնայ գեղծանել. ի վնաս թէ՛ իրեն եւ թէ ազգին. մինչդեռ ընդդիմադիր կուսակցութիւն մը, հակակշռի դիր կատարելով, հաւասարակշռութիւնը կը պահպանէ: Մէկ կողմով պատերազմ չ'ըլլար, ջտող յառաջ կուգայ. երկու կողմ, երկու բանակ պէտք է, կանոնաւոր պատերազմի համար»: Այսքան լուրջ եւ բանաւոր խօսքերու վրայ պէտք չ'կայ բառ մ'անգամ աւելցնել:

սին, թո՛ղ ճտուն, թո՛ղ գրին սրչափ կ'ուզեն. բուռական է որ Աստուծոյ տանը մէջ չուրանան Աստուծոյ գոյութիւնը, Բրիտանոսի Եկեղեցիին մէջ չճգնին չեզոքացնել այդ դարաւոր Հաստատութեան կատարած ահագին դերը, և Աւետարանի յաւիտենական ճշմարտութեանց հռչակման, կրօնի ու բարոյականի սկզբանց քարոզութեան, գերագոյն էակին պաշտամունքին յատկացուած սրբաւայրը չդարձնեն կուտակցական պայքարներու տխուր թատերաւայր մը: Ասիկա կը դպչի ժողովրդային ամենամոլորական զգացումներուն, ասիկա հակառակ է նոյն իսկ բարեկրթութեան ամենատարրական պահանջներուն, որ կը տրամադրեն հիւր գացած տան մը մէջ չթշնամանել տոնաւերը:

Կը մտածենք միւս կողմէ որ կուտակցականք իրենց կաղմակերպութեամբ ձեռք բերած ուժը, կորովն ու տաղանդը, եթէ երբեք գործածէին աւելի՛ կարեւոր պարագաներու մէջ, ազգին ցաւերու ամփոռնին, ազգին անխուսափելի պահանջներու ի գլուխ հանուելուն, ինչ միտ արդիւնքներ պիտի ստանային արդեօք: Եթէ, օրինակի համար, Տեաք՝ Վարդգէս, Մուրատ և ուրիշներ որ աթոռ ունին Ազգային Ժողովին թէ Օսմ. խորհրդարանին մէջ, միեւնոյն կորովի ընթացքը բռնէին մեկուսներու շարքին մէջ ալ, եթէ կարողանային Հայկական դատին ի նպաստ՝ իրենց կողմը շահիլ կարգ մը ճշմարտիւ արդարասէր մեկուսներ՝ Յոյն, Պուլկար, Արաք, Թուրք ևն., ինչ հրաշքներ պիտի գործէին արդեօք, և ո՞վ գիտէ ո՛րքան հանդիսաւոր հատուցում մը պիտի քուէարկէր նոյն Ժողովը՝ Կիլիկիոյ ահաւոր արիւնոտ եղեռնին զոհ գացողներուն, և կամ ո՛րքան արդար եւ անմիջական լուծում մը ձեռք պիտի բերուէր գաւառներուն մէջ գրաւուած հողերու վերադարձուելու հրատապ հարցին:

Բայց... կը տեսնեմ թէ կօշիկէն շատ վեր կ'ելլեմ: Մեր խելքը չի համիր այդ տեսակ բաներու: Անոնք, միտ բոյնքիօսները, անշուշտ գերագոյն պատճառներ ունին այդ տեսակ ընթացքի մէջ չգտնուելու. անոնք շատ լաւ գիտեն թէ ազգին

«ճգնաժամային հարցն» է գիտնալ թէ եկեղեցիները բաց թէ գոց պիտի մնան միթիւններու առջեւ? Ահա՛ միակ կարեւոր խնդիրը ներկայ տագնապալի շրջանին մէջ:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ամբողջութեամբ, ուրեմն, մեր համառոտ համայնին մէջ, փութանք խօսիլ էապէս եկեղեցական խնդրոյ մը վրայ: Ս. Հայրապետը ծանուցած է Ս. Պատրիարք Հօր, թէ եպիսկոպոս ձեռնադրուելու համար Թուրքիայէն շրջուելիք առաջնորդ-վարդապետները պէտք է Կաթողիկէ Ս. Էջմիածնի ածին օրը (յունիս 20) գտնուին ի Մայր Աթոռ. որովհետեւ Ն. Ս. Օձուութիւնն որոշած է այն օրը կապարել եպիսկոպոսական ձեռնադրութիւնները: Ըստ այսմ, Երուսաղէմի տեղապահ Տ. Գանիէլ Մ. Վ. Յակոբեան, Գալատիոյ, Կարնոյ և Տիգրանակերտի առաջնորդները, և Կառուց Անապատի վանահայրը հրաւիրուած են ժամ առաջ ճամբայ ելնելու դէպի Ս. Էջմիածին: Զերմ շնորհաւորութիւններ նոյն Ս. Հայրերուն՝ ազգին կողմէ իրենց ցոյց տրուած համարման և վստահութեան համար: Շնորհաւորութիւն՝ մանաւորապէս՝ Տաճարի պատուական աշխատակից Տ. Բարգէն Մ. Վ. Կիւլէսէրեանի, որ օգտակար դեր ունեցած է ո՛րքան իրեւ առաջնորդ՝ Ճանիկի, Մշոյ և Գաղատիոյ թեմերուն մէջ, նոյնքան ալ իրրեւ գրագէտ, բանասէր և հրապարակագիր: Արմաշական զաքացիալ և հմուտ եկեղեցականներուն մէջ, Գեր. Տ. Բարգէն Մ. Վ. ամէնէն կարկառուն դէմքերէն մէկն եղած է, և իրմէ՝ այսուհետեւ մանաւանդ՝ շատ կարեւոր ծառայութիւններ կը սպասեն հայ ազգն ու Եկեղեցին:

Բարի՛ ճանապարհ և ողջամբ վերադարձ կը մտղթենք ամէնուն ալ, ի փառս և ի պայծառութիւն Հայաստանեայց առաքելական Ս. Եկեղեցւոյն, որ առաւել քան երբեք արժանաւոր հովիւներու պէտք ունի, հովուելու համար իր վտարանդի, տագնապալի ու մերթ մուրեղալ հօտը:

Ուշագրաւ էին այս առթիւ իման ժողովի անցեալ շաբթուան նիստին մէջ

կատարուած խորհրդակցութիւնները, և փափաքելի էր որ գործնական ելք մ'ունենային: Նախ շատ բանաւոր է գաւառները չըջաբերականներ վրկելու որոշումը, որպէս զի առաջնորդական ընտրութեանց ատեն ուշադիր գտնուին, քանի որ ընտրուած վարդապետն եպիսկոպոս պիտի ձեռնադրուի և պսակուի նոյն Վիճակին վրայ, ինչ որ բացարձակապէս համաձայն է Հայ Եկեղեցւոյ աւանդութեանց: Միեւնոյն ատեն ապագայ անտեղութեանց առիթ չտալու համար, որոշուած է որ Պոլսոյ Պատր. Աթոռին համար որոշեալ թուով եպիսկոպոսներ գտնուին, այնպէս որ իր առաջնորդութիւնէն հրաժարող եպիսկոպոս մը չկարենայ պաշտօն գտնել ի Կ. Պոլիս, ինչպէս ցարդ կ'ըլլայ մեր Հայ-հռոմէական ազգակիցներուն մէջ:

Խնդիր է թէ մուտաւ տառ միայն չպիտի դատապարտուին այս աղուոր որոշումները: Եթէ կարելի ըլլայ կարուկ ընթացքով մը դառնալ Հայ Եկեղեցւոյ դաւաճող աւանդութեանց, և անբռնարարելի կանոն մ'ընել, եպիսկոպոսներու՝ անխուսափելի կերպով իրենց Վիճակին գլուխը գլուխուելու պայմանը, եթէ, միւս կողմէ, ամուրի եկեղեցականութեան մնացեալ մասնալ՝ ըստ հայկական հին սովորութեանց՝ վանական խաղաղ միջնորդութիւն մէջ ուսանողի և ուսուցանողի պատուաբեր դերը նախընտրէ, հետեւ մայրաքաղաքի խառնակ միջնորդութեն և աշխարհիկ կղերի հանգամանքէն, կամ եթէ գուառի անտեսուած ժողովուրդը հովուելու դժուրակ բայց այլապէս նուիրական պարտականութիւնը վերստանան փափաքանօք, (*) մենք կը

(*) Այսօր իսկ Բաքերդէն ստացուած նամակի մը մէջ կը կարդանք հետեւեալ տողերը, զոր Ազգ. Վարչութեան լուրջ ուշադրութեան կը ներկայացնենք.— «Կը խնդրեմ «Տաճար»ի խմբագիր եկեղեցական մարմնէն որ հովուազուրկ գաւառներուն համար դիտել տրուի Գեղը. Վարչութեան որ մէկմէկ առաջն. տեղապահ նշանակէ այդպիսի տեղերու համար: Հաւատացէ՛ք, է՛ն տկար վեղարուոր մը է՛ն ազդեցիկ աշխարհականէն կարեւոր է գաւառներուն համար: Մասնաւորապէս Բաքերդ պէ՛տք ունի հովուի մը, նոյն իսկ եթէ ան ըլլայ Երուսաղէմի տգէտ վարդապետ մը: Չափազանցութիւն չէ ըսածս, տգէտ հովուի միջոցով կառա-

կարծենք թէ գեղեցիկ սկզբնաւորութիւն մը եղած պիտի ըլլայ եկեղեցականութեան բարեկարգութեան, որուն վրայ այնքան հատու լեզուով մը կը խօսի երիտասարդ արմաշական մը, Տ. Սուրէն Վ. Գալէմեան, Տաճարի ներկայ թիւին մէջ:

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Տաճարի սոյն թիւին մէջ ուրիշ աշխատակից մը, Տիար Գր. Գալուստեան, շատ կարեւոր թելադրութիւններ կ'ընէ Հայութեան հրեք անշատ հատուածներուն միջեւ համերաշխութիւն հաստատելու իրաւունք առթիւ, զոր քանիցս յայտնած ենք այս սիւնակներուն մէջ, և միշտ պիտի ուզենք անդրադառնալ ատոր: Թիւրիմացութեանց տեղի չտալու համար պէտք է ճշտենք միանգամ ընդ միշտ թէ, գտնէ առայժմ, «Ազգին երկու անջատ հարուածներուն Մայր Եկեղեցիի հետ միացման խնդիրը» չէ մեր յուզածը, ինչպէս կ'ենթադրէ ազնիւ յօդուածագիրը: Մեր փափաքն է, խղճի և գաւառական խնդիրներէ անջատարար, սրտով, հոգիով և ազգային զգացումով միացած տեսնել ազգին երեք հատուածները՝ իբրեւ անհրաժեշտ անդամները միեւնոյն մարմնոյն:

Միւս կողմէ մեր համոզումն է թէ եկեղեցին անխախտ է, անյեղլի իր հիմնական վարդապետութեանց և Փրկչաւանդ սկզբանց մէջ: Ծիսական երկրորդական կէտերու մէջ կարելի և ներելի է տարբեր կարծիք ունենալ և զիջողութեան հակամիտութիւններ ցուցնել ի սէր ազգային համերաշխութեան: Բայց ատիկա այլ չի կրնար ընել ինքնաբերաբար ունէ եկեղեցական՝ ամենաբարձր աստիճանաւորէն սկսեալ մինչև յիսին սարկաւազը, այլ եկեղեցականներէ և աշխարհականներէ բաղկացեալ ազգային համագումար ժողովի մը որոշումէն կախում ունի: Սպասելով այդպիսի ժողովի մը,

վարուելիս ու իր վտանգներն ունի, զիտեմ, բայց բոլորովին անխնամ մնալ գէշ է, քան տգէտ հովուի մը ներկայութիւնը վայելել գէթ, զի կարելի է կարող աշխարհական մարմնոց օգնութեամբ խօսեցնել այդ տկար լեզուն առաջի կառավարութեան մը, որ սահմանադրական օրինակ մէջ իսկ սկզբունք ընտրած է խորի զննել ցեղերու մէջը»

որուն գումարումն յուսանք թէ չի յապաղիր, չնորհիւ Ն. Ս. Օծութիւն վեհ. Տ. Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոսի համակիր տրամադրութեանց, պէտք է աւելցրնենք որ Հայ Եկեղեցին—ամէնէն լայնամիտը բոլոր Եկեղեցիներուն մէջ—ներողամիտ, հայրական գութութեանք մը ունի միշտ իր բոլոր զաւակներուն հանդէպ, և ձեռնտու է իր ներկայ վիճակին մէջ ալ սիրոյ և համերաշխութեան նպատակով առնուած քայլերուն:

Այդպիսի կարեւոր քայլ մ'էր իսկին ժողովին անցեալ շարթուան որոշումը, որով պաշտօնապէս նուիրագործեց արդէն բաւական ժամանակէ ի վեր ընդունուած դրութիւն մը թէ Հայ-բողոքականք կրնան մասնակցիլ Հայ Ուսումն. Խորհուրդներու, և կրթական խնդրի հետ առնչութիւն ունեցող ուրիշ մարմիններու, և այդ մասնակցութիւնն ազգին զարգացման և գաստիարակութեան ընդհանրացման տեսակէտով արդիւնաւոր նկատեց:

Կարեւոր քայլ մ'է այս՝ համերաշխութեան ճամբուն մէջ առնուած, որուն նըշանակութիւնը կը շեշտուի մանաւանդ երբ ի նկատ առնուի թէ գաւառէ մը եկած հարցումի մը առթիւ տրուած է որոշումը: Ուրիմն, գաւառներու մէջ ալ սկսուած է սոյն կարեւոր շարժումը: Ժողովրդեան վարիչներուն կը մնայ քաջալերել զայն, միութեան, սիրոյ կապ մը հաստատել անջատուած հատուածներուն միջև: Մենք մեր մանկութեան օրերուն կը յիշենք Կիլիկիոյ շրջանակին և ուրիշ գաւառներու ալ մէջ, ցուրտ, արհամարհոտ վերաբերում մը զոր անոնք կը ցուցնէին մէկմէկու նըկատմամբ: Ականջալուր եղած ենք Հայ-հոռմէականներու որ ամօթ կը համարէին իրենց՝ հայ անունը, և զիրենք բնորոշելու համար միայն «կաթողիկ» բառը կը գործածէին: Հայ-բողոքականք ևս նոյն արհամարհանքն ունէին «նախապաշարեալ» Հայուն նկատմամբ: Եւ ցաւ է ըսել որ անոնց կզերն ալ պղտիկ գեր մը չէր որ ունէր այդ զգացումին արծարծման մէջ: Հիմակ անցած են այդ գարերը: Մենք վստահ ենք թէ ալ ոչ մէկ բողոքական

քարոզիչ, ոչ մէկ կաթողիկ վարդապետ պիտի ուզէ արհամարհոտ բառ մը արտասանել Հայ Եկեղեցիին և անոր հարազատ զաւակներուն նկատմամբ: Մեր Հռոմէական և Բողոքական ուղղակիցներն ալ նոյնքան վստահ կրնան լլլալ իրենց արհնակից եղբայրներուն խղճի ազատութեան նկատմամբ տածուած յարգանքին:

Թո՛ղ այս փոխադարձ սէրն ու յարգանքը ջանացուի սիւնել ժողովուրդի ամէնէն մութ խաւերուն մէջ, և մնացեալն ինքնին կուգայ, ժամանակի գործ մըն է պարզապէս:

ԶԱՐԿԱՅՐ ՔԱԶԱՆԱՅ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻԻՆ

ՄԱՍՆԱՃԻԻՂ Կ. ՊՈԼՍՈՑ

Տարիներէ ի վեր իրարու յաջորդող աղէտներու տակ ճնշուած դժբախտ հայ աղէտեալներու բազմապիսի կարօտութեանց դարմանումը միայն պատահական միջոցներէ սպասելն անբաւական, և նոյապիսի գործին կազմակերպեալ ու տեւական հիման մը վրայ դնելու պէտքն զգալի դարձած ըլլալով, չորս տարի առաջ հաստատուած է ի Գահիրէ «Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւն» անունին տակ մարմին մը՝ ճիշտ այդ պէտքին գոհացում տալու առաջադրութեամբ:

Հ. Բ. Ընդհ. Միութիւնը զուտ մարդասիրական ընկերութիւն մըն է, առանց որ եւ է քաղաքական հանգամանքի, և նպատակ ունի մեր հայրենի հողին վրայ ապրող ազգայնոց, առանց դաւանանքի խտրութեան, նիւթական և բարդական կարօտութեանց նպաստել:

Միութեան կեդրոնատեղին է ի Գահիրէ և վերին վարիչ մարմինն անդ կը գտնուի, Վսեմ. Պօղոս Նուպար փաշայի նախադաւութեան տակ:

Ամէն Հայ՝ առանց սեռի և դաւանանքի խտրութեան, կրնայ անդամակցիլ Միութեան, որ արդէն պաշտօնապէս ճանչցուած

է Օսմ. և Եգիպտական կառավարութիւններէն, և թէպէտ անկախ ազգային իշխանութենէն, սակայն իր կազմութեան օրէնքուն իսկ արժանացած է Հոգեւոյս Խրիմեան Հայրիկի օրհնածիր կոնդակին և քաջալերութեան: Ամենայն Հայոց այժմու վեհ. Կաթողիկոսը՝ Տ. Տ. Մատթէոս Արքեպ. Իգմիւեան, և Թրքահայոց Պատրիարքը՝ Ամին. Տ. Տ. Եղիշէ Եպիսկ. Դուբեան ևս խաւիտահ կոնդակներով և գրութիւններով իրենց օրհնութիւնն ու քաջալերութիւնը չնորձած են այս հաստատութեան:

Իր անդամներու մօտից տուրքերէն և ամսավճարներէն զատ՝ Միութիւնը կ'ընդունի նաև նուէրներ, կ'ստանձնէ կտակներ և կ'օգտուի Կեդրոնական վարչական ժողովոյ ստեղծած կամ անոր հրամանով արտօնուած որ և է հասցիւթի աղբիւրներէ:

Ընդունուած նուէրներ, մօտից տուրքերը և ամսավճարներու մէկ վեցերորդը կը յատկացուին դրամագլխի բաժնին որ կը մնայ անձեռնմխելի, իսկ ամսավճարներու հինգ վեցերորդը և դրամագլխի տոկոսը կը գործածուի ընկերութեան նպատակին:

Մասնաճիւղերու բոլոր հասցիւթները կը ղրկուին Գահիրէ, Միութեան Կեդրոնը որ ինք միայն իրաւասութիւն ունի նպաստ հասցնելու ուր որ պէտք է:

Միութեան դրամագլուխը Գահիրէի Գրէտի-Լիոնէ դրամատան մէջ ի պահ կը դրուի հնչուն դրամով կամ առաջնակարգ արժեթուղթի վերածուած: Նպաստներու համար տրամադրելի գումարն ևս հնչուն դրամով կը մնայ նոյն դրամատան մէջ:

Իր հաստատութենէն ի վեր չորս տարուան շրջանի մէջ Միութիւնը յաջողած է գոյացնել 15,000 Օսմ. ոսկիի չափ տոկոսաբեր դրամագլուխ և ցարդ իրեն յատուկ եկամուտներէն՝ իր միջոցաւ հայաբնակ գաւառները հասուցած է 10,000 ոսկիէն աւելի նպաստ:

Միութիւնն ունի այսօր ամենուրեք անգամներ, մինչև իսկ Կեդրոնական Ափրիկէի և ծայրագոյն Արեւելքի մէջ. ունի մասնաճիւղեր Եգիպտոսի, արևմտեան Եւրոպայի և Ամերիկայի ինչ ինչ քաղաքներուն մէջ: Իսկ Թուրքիոյ մէջ նախ ի Զմիւռնիա և ապա ի Կ. Պոլիս հաստատուեցան մասնաճիւղեր:

Կ. Պոլսոյ մասնաճիւղին հաստատութիւնը և Գործադիր Ժողովոյ ընտրութիւնը տեղի ունեցաւ ներկայ տարուան Մարտ 14ին, Գործադիր Ժողովն ապա հետեւեալ կերպով կատարեց իր դիւանական կազմակերպութիւնը:

Ա. Ասեմապէս Գաբրիէլ Կփ. Նորսունկեան (Բերա, Թագաթի հրապարակը, Թ. 19)

Բ. Ասեմապէս Մկրտիչ Կփ. Էսսեան (Կալաթա, Մէհմէտ Ալի Փաշա խան)

Ասեմապիւր Տոքթ. Նազարէթ Կփ. Տաղաւարեան (Բերա, Թագաթի փողոց, Թ. 33)

Գանձապէս Արսաշես Կփ. Հիւրմիւզ (Կալաթա, Աղարեան խան)

Հաշուեմէնի Յարութիւն Կփ. Արսաւեան (Կալաթա, Գաղիքաւ խան)

Խորհրդակցութեամբ Եղուարդ Գաւակոզեան, Մկրտիչ Մանուկեան, եւ Իքրանոս Իքրանուեան Կփ. Կենսիներ:

Գործադիր Ժողովն իր նախապատրաստական աշխատութիւններն արդէն աւարտած ըլլալով, Ապրիլ 1էն սկսած է գործի: Կեդրոնատեղին է առ այժմ Բերա, Թագաթի փողոց, Թ. 33: Մասնաճիւղին վերաբերեալ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել Գործադիր Ժողովի Ատենապետին կամ Ատենադպրին. իսկ դրամական առաքումները պէտք է կատարել Գանձապետին, Արտաշէս Կփ. Հիւրմիւզի հասցէին:

Միութեան անդամակցիլ փափաքողները կրնան իրենց կամքը յայտնել գրաւոր կամ բերանացի՝ Գործադիր Ժողովի անդամներէն ո՛ր եւ է մէկուն: — Անդամակցութեան պայմաններն են վճարել. Ա. Մտից տուրք մը որուն նուազագոյնն է 12 զրշ. և Բ. ամսավճար մը որ մէկ բաժնի համար 6 զրշ. է (մէկէ աւելի բաժնի ուժը րազդողները պարտին վճարել 6ի բազմապատիկը՝ 12, 18, 24, 30... 54... 108 զրշ. և այլն):

Մասնաճիւղն ունի հաւաքիչ մը՝ Պ. Արտաշէս Սէմէրեան որմէ ստացուած կնքեալ և Գործադիր Ժողովոյ Ատենապետին ու Գանձապետին կողմէն ստորագրեալ ընկալագրի փոխարէն անդամակցիցները կրնան յանձնել իրենց վճարքները, և գրա-

գիր մը՝ Պ. Յովհաննէս Դազանճեան որ Մասնաճիւղին գրասենեակը կը գտնուի Կիրակիէ վատ՝ ամէն օր, իրիկուան ժամը 4էն 7 (Ը. Ե.), որմէ կարելի է ստանալ Միութեան մասին փափաքուած ամէն տեղեկութիւնները:

Հ. Բ. Լնդհ. Միութիւնը, ինչպէս կ'երեւի, իր զուտ բարեգործական և անկախ ծրագրով, կոչուած է կատարելու միւր ազգին կարօտութեանց դարմանման և անոր նիւթական ու բարոյական վիճակին ապագայ բարելաւման գործին մէջ գնահատելի կարեւոր ծառայութիւն մը, և այս ծառայութիւնն ա'յնքան աւելի լաւագոյն կերպով և ծաւալուն սահմանի մէջ պիտի կրնայ կատարել՝ որչափ աւելի ընդարձակին իր միջոցները: Կ. Պոլսն՝ իր շրջականերով, իբրեւ ամէնէն նայալատ և բարեկեցիկ կեդրոնը, բնական է թէ ամէնէն աւելի պարտականութիւն ունի օժանդակելու այսպիսի բարենպաստակ կարեւոր գործի մը, և նոյնքան բնական է թէ Միութիւնն իրաւունք ունի մեծ յոյսեր դնելու մայրաքաղաքացի ազգայիններուն ազգասիրական և բարեսիրական տրամադրութեանց վրայ: Կետեւաբար այդ հաստատ յոյսով կոչում կ'ընէ ամէն դաւանանքէ ազգայնոց անդամակցել այս բարենպաստակ Միութեան և իրենց կարողութեան չափով սատարել անոր նպատակին արդիւնաւորման:

ԽՄԲ. «ՏԱՃԱՐ»-ի. — Հրատարակելով հայկական բարեգործական ընդհ. միութեան Պոլսոյ մասնաճիւղին ներկայ յայտարարութիւնը, խղճի պարտք կը համարինք ջերմ հրաւեր մ'ուղղել ամէն կարգի ազգայնոց, և մասնաւորապէս եկեղեցական հարց, սիրով մասնակցել այս գերազանցօրէն օգտակար մարմնոյն բաժանորդագրութեան: Անիկա արդէն իսկ բարեբար դեր մը կը կատարէ Հայաստանի և իսկիւն աշխարհի ցրուած Հայերու տնտեսական, իմացական բարոյական զարգացումին մէջ: Դեռ վերջերս կը կարգայինք թերթերուն մէջ թէ Միութիւնը, Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին թելադրութեան վրայ, գնած է Լաթաքիայի մօտ Արֆալու արորախօս հայ գիւղին 500

արտավար հողը՝ Օրտուցի ձէլալ աղայէն, որ կը հրամայէր խեղճ գիւղացիներուն ձեռքել հեռանալ այն տեղերէն, որովհետեւ ինք որոշած էր նոյն հողերը ծախել: Բարեգործական Միութիւնը, այդ հողերը պղտիկ վարձքով մը թողած է գիւղացիներուն գործածութեան, մինչեւ որ օր մը կարենան փոխարժէքը տալով տիրանալ հողին: Ահա այս կերպով նոյն միութիւնը նախախնամական դեր մը ունեցած է ամբողջ գիւղի մը բնակչութեան համար:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Կը յիշենք գաւառի և արտասահմանի բաժանորդներուն թէ իրենց առաքումները պէտք է ընեն մի միայն առ Տնօրէն Խմբագիրն, Ջարմայր Բնկ. Կեղիւրեան, Պեշիքաշ, յապաղումներու և շփոթութեանց տեղի չտալու համար:

* * * Կեցամեայ բաժանորդները պէտք է փութով նորոգեն իրենց բաժանորդագրւոյն, յաւաքիկայ 12րդ թիւէն ետք ալ կանոնաւորապէս շարունակուելու համար առաքումները:

Միւս կողմէ կը ինդրուի ցարդ լուռ մնացող գաւառի և արտասահմանի Պատ. Գործակալներէն՝ փութով ճշտել բաժանորդներու անուններն և հաշիւները, թերթիս առաջին վեցամեակը (12րդ թիւ) լրանալէն առաջ:

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՐՑ ԵՒ ՇԵՈՐՀԱԼԻ. Պատմա-ֆննական տեսութիւն. — Գրեց Արտաւազդ Վրդ. Գալէստէրեան, առաջնախոսական Եւդոկիոյ: Երիտասարդ Արմաշակունի վարդապետական ձեռնագրութեան առթիւ գրի առած աւարտական լիծօն է ներկայ հատորիկը, որ Մարդուանի Արապեան տպարանէն իւրոյս ելած է մաքուր տպագրութեամբ: Հայուն ազգային-եկեղեցական պատմութեան ամենակարեւոր մէկ դրուագը կը պատկերացուի ասով, միեւնոյն ատեն ծանօթացուելով հոյակապ երախտաւոր դէմք մը՝ հայ Մատենագիր-Կաթողիկոսներու շարքին մէջ: Գին 4 զրչ.: Կեդրոնատեղի Եաղըճեան գրատուն, Սուլթան Համամ, Պազրըճըլար:

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՀՄԱՅՆԱԿ ԳԶՆԵ. ԷԲՍԷԻՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՀԱՐՄԱՅՐ ԳԶՆԵ. ԿԷՋԻՒՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

1871

1872

1873

“ՏԱՃԱՐԻ”
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դուրուս
աւառաց » »	40 »
Արշասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Չեռֆէ կը ծախուի պրակը	50 փարայ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Մ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Մ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
4. Տ. Պարգեւ Վրդ. Դանիէլիան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարլեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բնյ. Պալըզճեան
5. Տ. Պօղոս Բնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Դէորդ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

Տանարի թէ՛ վարչական և թէ խմբագրական գործերուն համար պէտքէ դիմել առ
Զարմայր Բահանայ Կէզիւրեան, Կ. Պոլիս Պէշիքթաշ, Հայոց Եկեղեցի,

درسمادتہ بشکطاشدہ ارمنی کلیسائندہ «داجار» غزتمی مدیری پاپاس زارماير

Rev. Père Zarmaïr Guézurian

Rédacteur de la Revue «DADJAR» Constantinople, Béchiktache, Eglise arménienne